



### ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱԵՍԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդի Գործադիր Վարչութեան ժողովը գումարուեցաւ 9-11 Յունուար 2003ին, Լիւսնոն-Կիպրոս, ատենապետութեամբ Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդի չորս նախագահներուն եւ մասնակցութեամբ ընդհանուր քարտուղարին, Գործադիր Վարչութեան անդամներուն եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ներկայացուցիչներուն:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Գործադիր Վարչութեան անդամներ՝ Սեպուհ եպս. Սարգիսեան (Առաջնորդ Թեմի) եւ Նարեկ եպս. Ալեքսանդրեան (Վարիչ-քարտուղար միջեկեղեցական յարաբերութիւններու) մասնակցեցան ժողովին:

Ընդհանուր քարտուղար վեր. Ռիտ ժարժուր ներկայացուց իր 2002 տարուան տեղեկագիրը եւ վեկուցեց ՄԱԵՍԻ բաժանմունքներու գործունէութեան մասին: Ապա, ժողովականներ քննարկեցին օրակարգի կէտերը:

Միւս կողմէ, Միջին Արևելքի Արևելեան Ուղղափառ (Ոչ Քաղկեդոնական) Եկեղեցիներու հոգեւոր պետերու նշանակած մասունքները յանձնախումբի ժողովը գումարուեցաւ Շաբաթ, 11 Յունուար եւ Երկուշաբթի, 13 Յունուար 2003ին, Կիպրոսի Ալգայիս անաշտորդարանէն ներս:

### ՆՈՐ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԶԱԿԱՏԱԳԻՐԸ ՊԻՏԻ ԶՇԴՈՒԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի երէկ Սաայիի մէջ հաստատեց, որ կառավարութեան կողմէ նախանշեալ օր ճշդուած դրամատուներու տոկոսներուն վրայ տուրքերը քննարկուած չեն ելեւմուտքի եւ պետական պիտուանքի քննարկման երեսփոխանական յանձնախումբին կողմէ. հետեւաբար նշեալ որոշումին վաւերացումը կը մնայ յառաջիկայ շաբթուան ընթացքին կայանալիք խորհրդարանի լիազումար նիստին:

Միւս կողմէ, յանձնախումբի նախագահ երեսփոխան Սամիր Ալպար ներկայացուց 2003ի պետական պիտուանքի նախագիծը եւ պատրաստեց տեղեկագիրը՝ յառաջիկայ Չորեքշաբթի օր գումարուելիք խորհրդարանական լիազումար նիստին ներկայացուելու համար պայն:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԱՐՏԱԲԻՆ գործոց եւ արտերկրի լիքանաւորներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչարդ Քիւրթը, որ յայտնեց, թէ Իրաք պէտք է փոստի հասարակական քանոնները վերադարձնէ: Համուտ հետաձայնալին հաղորդակցութիւններ ունեցաւ նաեւ իր սուրիացի եւ եգիպտացի պաշտօնակիցներուն՝ Ֆարուք Շարէիի եւ Ահմէտ Մահերի հետ:

### ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

#### ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻՆ

Սիրելի հայրենակից, Լիբանանի Մարաշի Հայրենակցական Միութեան վարչութիւնը այս տարի եւս պիտի ոգեկոչէ Մարաշի աղետին 83րդ տարելիցը:

Ս. Զառանգից Մանկանց եկեղեցի 3աւարտ Ս. պատարագի ժամը 10:00իս Մ. Փրկիչ եկեղեցի Հայ Անտարանական եկեղեցի ժամը 10:00իս

### ASHIAN TOURS

Ս. Սարգիսի, Տեառնդառաջի, Սեմ Կալընթայ-նի եւ Ատիա տունը առիթներով, երազային շրջապատոյ դէպի Կիպրոսի Լիւսնոն քաղաքը, 12էն 16 Փետրուար, 5 օր. օր մը Սիկոսիա, օր մը Լաւնաքա, օր մը Այաճափ, օր մը Զաֆոս քաղաքները պտղունքով, գիներ՝ Pefkos 3 աստղանի պանդոկ փոխան 380 \$ի միայն 260 \$, Apollonia 5 աստղանի պանդոկ փոխան 485 \$ի միայն 350 \$:

Հեռ. 01-240654 եւ 03-233978:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԸԱՐՅԵՐԸ ՊԻՏԻ ՄՏԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԱՐԺԱՆԻ ՌԵՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Վոր. Լահուտ երէկ նկատել տուաւ, որ լիբանանցիներուն զգայուն եւ տկար կէտը պետական կարգ մը վարչութիւններն են, որոնք հարցերը պէտք է լուծել անմիջապէս պետական քննիչներու միջոցով, ինչպէս նաեւ համապատասխան նախարարութիւններուն կողմէ մանրամասնօրէն հետապնդել անոնց աշխատանքները:

Հանրապետութեան նախագահին հետ իրենց հանդիպումներէն ետք, երեսփոխաններ ըսին, որ Վոր. Լահուտ նշած է, թէ պետութիւնը բարեացակամ պիտի զտնուի այն վարչութիւններուն նկատմամբ, որոնք աշխատանքի յախտումներ արձանագրած են եւ ծխական հակազդեցութիւններ ունեցած քաղաքացիներուն վրայ, իրենց մատուցած ծառայութիւններուն ընդմէջէն: Անոնք յայտնեցին, որ նախանշեալ օրուն կառավարութեան ժողովին նախագահ Լահուտ կոչ ուղղած է՝ աշխուժացնելու պետական պաշտօնեաներուն աշխատանքը քննող կեդրոնական խորհուրդին աշխատանքը:

Նախագահ Լահուտ նաեւ հաւատարմեց, որ ընկերային հարցերը

յառաջիկայ քանի մը ամիսներուն պիտի ստանան իրենց արժանի ուշադրութիւնը, յատկապէս ծերութեան թոշակ ստանալու դրութիւնը, որպէսզի իւրաքանչիւր քաղաքացի արժանանայ իր արդար իրաւունքին:

Նախագահ Լահուտ հաստատած է, որ երկրին մէջ հաւասարակշռուած բարգաւաճումի ծրագիրը նաեւ պիտի ընթանայ անհրաժեշտ ձեւով եւ 2003ի պետական պիտուանքի նախագիծին մէջ բարգաւաճման ծրագիրներուն յատկացում զուգարը

հաւասարապէս պիտի բաժնուի տարբեր շրջաններու մէջ բարգաւաճման ծրագիրներու գործադրութեան՝ առաջնաժողովներով:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիւնիորան, որուն հետ քննարկեց տնտեսական եւ ելեւմուտքի հարցեր: Քննարկումի առարկայ դարձան նաեւ պետական պիտուանքի նախագիծը եւ կառավարութեան որոշած դրամատուային տոկոսներուն վրայ դրուած հինգ առ հարիւրի նոր տուրքը:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՐԵԿ ՔՈՐԱՅԻՄԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայիմի մէջ ընդունեց Արաբական Սակարանի Համադաշնակցութեան պատուիրակները՝ նախագահութեամբ Սաաֆաք Ռաքիպիի եւ ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիւնիորայի:

Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու ելեւմուտքի նախարար Մոհամէտ Խալաֆան Պրն Խարպաշը, որուն հետ քննարկեց երկու երկիրներուն միջեւ երկկողմանի յարաբերութիւնները: Վարչապետ Հարիրի այցելեց նաեւ հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրան: Հանդիպումին քննարկուեցան ներքին եւ շրջանային իրադարձութիւնները:

### ՄԻՋԱԴԷՊ՝ ՌՈՒՄԻԵԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

Ռումիի բանտին մէջ Տրնիի մէջ պատահած դէպքերուն պատճառով ձերբակալուած երիտասարդներն իւր մը մը երէկ խուլիկանութիւններ կատարեց: Անոնք բախումներ ունեցան բանտապահներուն հետ, արձանագրուեցան 8 վիրատրներ:

Բանտարկեալները դգայները սրած էին ու վերածած դանակարարական աշխարհին եւ կրթական հարցերուն վերաբերող դժուարութիւններ:

Բանտարկեալները մերժեցին դատավարութեան ներկայանալ եւ երբ ներքին ապահովութեան ուժերէն պիտուր մը փորձեց բանակցիլ անոնց հետ իմրակը յարձակեցաւ պիտուրին վրայ եւ խոշտանգեց պայն: Բանտարկեալներ՝ Իհապ Պաննա եւ Սալիտ Մրնաուի փոխադրուեցան հիւանդանոց: Ներքին ապահովութեան ուժերը յաջողեցան կացութիւնը հակակշռել:

Միւս կողմէ, ընդհանուր դատախապ Ատնան Ատտուլ յայտարարեց, որ բանտերուն մէջ նման խմբակներու կողմէ խուլիկանութիւններ կատարելու դրութիւնը երբեք արտօնելի չէ եւ ըսաւ, որ պիտի պահանջէ նշեալ խմբակը փոխադրել այլ արգելարաններ եւ կամ պանոնք բանտարկել մեկուսարաններու մէջ:

**ԵԹԵ**  
● Գործ կը փնտռէ  
● Գործաւոր կ'ուզէ  
ԴԻՍԵՅԷ  
Հեռ. 03-963499:

### ԿԸ ՆՈՒՐԵՆ

● Իրենց օրը՝ Լուիզ Պեքերեմանի (ծնեալ՝ Մագսուտեան) մահուան քառասունընամեակը, Յակոբ Պեքը եւ Լորիս Պեքերեմաններ 150,000 Լ. ռ. կաթողիկոսարանին:  
● Սոյն առիթով, տիկին Պեքերեմանի Մաքսուտեան եւ գաւազնը 100,000 Լ. ռ. թնչոց Բոյնիս եւ 100,000 Լ. ռ. Չուպրոնց կեդրոնին:  
Կը խնդրուի նուիրատուութիւնները ստանալ պրն. Յակոբ Պեքերեմանին, հեռ. 01-333947 եւ 03-968224 քիւրուս:

Շուկանաւորութեամբ՝ Խորհրդարանի փոխ նախագահ **ԷԼԻ ՖԵՐՉԼԻԻ** «ITALIA FILM» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ **Շ. Յ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՅ ԴԱՏԻ ՄԱՐՍԻՆԸ** Կը կազմակերպեն **ԱԹՍԵ ԵԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» ֆիլմի** ցուցադրութեան պաշտօնական բացումը Լիբանանի մէջ: Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 21 Յունուար 2003, երեկոյեան ժամը 7:30իս, Planet Abray սրահին մէջ, Center Abray: Մուտքը՝ հրաւիրատուով **Ծանօթ.** ՇՐԱԻՐԱՏՈՍՄԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼԻ ՉԵՆ

### ԼՕՍԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՆՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՉԵՌՆԱՐԿ



Հովանաւորութեամբ Լիբանանահայ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ քարոզչական յանձնախումբին, երէկ կէսօրու ժամը 1:00ին տեղի ունեցաւ մանուկներու իրաւունքներու նուիրութեամբ ձեռնարկ մը:

«Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցած այս ձեռնարկին ներկաներուն շարքին էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, երեսփոխան Նայիւր Մուաուատ, լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարաններու տնօրէններ եւ մեծ թիւով աշակերտներ:

Լիբանանի եւ ԼՕՍԻ քայլերակներու ունկնդրութեան ետք, քարոզչական յանձնախումբին անունով յօսք առաւ Անի Կիտանեան, որ նշեց, թէ մեր իրականութեան մէջ տակաւին մեծ է թիւը իրաւագրութեամբ մանուկներուն, որոնք իրաւունքներուն պաշտպանութիւնը պէտք է դառնայ առաջնահերթ մտահոգութիւն:

Երեսփոխան եւ խորհրդարանի մէջ մանուկներու իրաւանց յանձնախումբի նախագահ Նայիւր Մուաուատ թուեցէ ետք աշխարհի եւ Լիբանանի տարածքին մանուկներու իրաւունքներուն բռնաբարձման ձեռքը, ներկայացուց գանձու կանխարկելու միջոցները: Ան նշեց, որ Լիբանան արարական առաջին երկիրն է, որուն խորհրդարանը կազմած է մանուկներու իրաւունքներու հետապնդման յանձնախումբ մը: Խօսքը ուղղելով ներկայ աշակերտութեան՝ ան եզրակացուց. «Դուք մեր ապագան էք եւ անհրաժեշտ է, որ տեղեկ ըլլաք մանուկներու իրաւունքներուն մասին, որպէսզի ապագային դուք ձեր կարգին պաշտպանէք գանձը»:

Գեղամ եպս. Խաչերեան իր խօսքին մէջ շեշտեց անհրաժեշտութիւնը՝ հետապնդելու եւ յարգելու մանուկներու իրաւունքները եւ հարցը ներկայացուց քրիստոնէական գիտանկիւնէն մեկնած: Փաստարան Իգապէլ Աբրահամեան մանրամասնօրէն ներկայացուց մանուկներու իրաւունքները՝ կէտ առ կէտ կեդրոնանալով անոնցմէ իւրաքանչիւրին վրայ:

Ձեռնարկի աւարտին գործադրուեցաւ զգեղարձեստական յայտագիր: Թամար Իսկէնեան շուրջ վրայ նուագեց «Քամեցան», իսկ Անի Գարրինեան ասմունքեց «Երգ Ապատութեան» բանաստեղծութիւնը:

### ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՎԱՐՊԵՏ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երէկ, երեկոյեան ժամը 20:00ին, Հայ կաթողիկէ Մետրոպոլիտան վարժարանի ժողովարանին մէջ տեղի ունեցաւ մշակութային երեկոյ մը, նիւթ ունեցաւ «Հայ թատրոնի վաստակաւոր վարպետ Պետրոս Ադամեանի կեանքն ու գործը», կազմակերպութեամբ Մետրոպոլիտան վարժարանի Նախկին Մաներու Միութեան:

Օրուան բանախօսը՝ Դաւիթ Յ. Էվերեկեան ներկայացուց Պետրոս Ադամեանի կեանքը: Ան Պետրոս Ադամեանի վաստակին մասին հայ գրողներու եւ ռուս հայրային կարծիքի տեսակետները ներկայացուց ընդհանուր, որ Պետրոս Ադամեան ոչ միայն աննշտուած անուն էր այլ՝ գային կեանքին մէջ, այլ նաեւ՝ միջազգային մակարդակի վրայ:

Դասախօսութեանէն ետք հայ կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ հայր Վարդան եպս. Ազարեան բանախօսին թատերական գործունէութեան 50ամեակին առիթով կարգաւ հայ կաթողիկէ Ներսէս - Պետրոս ԺԺ. պատրիարքին «Մարտիրոսի գիրք»։ Դաւիթ Յ. Էվերեկեան պարգեւատրուեցաւ պատրիարքութեան քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հոշակման 1700ամեակի յուշանշանով:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՂՈՍ) **ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ** Սիւր՝ «ՄԱՐԴԱՅԻՆ ԿՐԿԵՕՐԻՆԱԿՈՒՄ (HUMAN CLONING) ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԻՏԱՆԿԻՒՆ» Դասախօս ՀՈԳՇ. Տ. ԳԵՂԱՐԳ ԱՐԸ. ՔԻՒՍՊԵԿԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Յունուար 2003, երեկոյեան ժամը 6:30իս, ՀԵՂՈՍԻ կեդրոնատեղիին մէջ, մայրավանդ Աճախեան: Հրաւիրուած են բոլոր հայ համալսարանականները: **ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀՕՏԸ, ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Ամէն անգամ, որ կը մտածենք «Եկեղեցի» եւ մանաւանդ «Հայ եկեղեցի» հասկացողութեան մասին, մեր մտքերուն մէջ կը ծագի իրական հարցադրում մը. արդեօք եկեղեցին միայն այդ քարեղէն եւ նիւթական կառուցն է, ուր ամէն կիրակի տեղի կ'ունենան ծիսակատարութիւններ, հաւատացեալներ կ'երթան «մոմ մը» վառելու (չատ յաճախ ալ չեն վառեր), եւ այդ արարողութեան հետ կը վերադառնան իրենց տունը՝ անգամ մը եւս մարմնաւորութեամբ նիւթական առօրեայի տաքնապներուն մէջ, թէ եկեղեցին նաեւ հաւատացեալներու համայնութիւն է, որուն անդամ իւրաքանչիւր հայ քրիստոնէս պէտք է ինքզինք խորապէս պատասխանատու եւ յանձնառու զգայ եկեղեցւոյ կեանքին մասնակցութեան եւ համայնքի վիճակի բարելաման առնչութեամբ:

Վերոյիշեալ հարցումին որոշ չափով պատասխանելու կու գայ Պէյ-րուսի Հայ ազգային «Վահէ Աշխատ» տպարանէն լոյս տեսած «Ազգայն» աշխատակիցներէն փարիզացի մտաւորական Յակոբ Պալեանը: «Հօտը, եկեղեցին եւ հոգեւորականութիւնը» հատորը:


140 էջնոց հատորին մէջ Յ. Պալեան իր համարած հարցադրումներով կու գայ շեշտելու հայրենի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հոգեւոր կեանքին մասնակցող դարձնելու, ինչպէս նաեւ եկեղեցին ժողովուրդին մօտեցնելու անհրաժեշտութիւնը: Եկեղեցւոյ կեանքին մէջ ժողովուրդական ամենալայն մասնակցութիւնը պահանջելու համար, Յ. Պալեանի կարծիքով, պէտք է յատուկ կարեւորութիւն տալ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ (իր բոլոր նուիրապետութիւններով) կառուցումներին ժողովրդավարացման եւ

աշխարհականներու դերակատարութեան ամրապնդման, որովհետեւ Հայաստանեայց եկեղեցին, իր ստեղծման սկզբնական օրերէն ի վեր, ոչ թէ եղած է կղերական եկեղեցի, այլ՝ հասարակական ընդհանուր մը, ուր աշխարհականները, սկսելով Բագրեւանդի եւ Շահապի վանի եկեղեցական ժողովներէն, իրենց հիմնական գերը ունեցած են որոշումներ տալու մէջ:

Այս առնչութեամբ Յ. Պալեան կը մատնանշէ նաեւ ուրիշ հարց մը: Եկեղեցին միայն այն տեղը չէ, ուր ծիսակատարութիւններ եւ արարողութիւններ տեղի կ'ունենան: Այս գործառնութիւն կողմին, եկեղեցին նաեւ ունի այլ գործառնութիւն, որոնք կու գան նոյնիքն քրիստոնէական վարդապետութեան խորքէն եւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ազգային աւանդներէն կը բխին:

Այս իմաստով այլ եկեղեցին իր հիմնական դերակատարութիւնը ունի ստանձնելիք համայնքի ընկերային վիճակի բարելաման, հոգեւոր արժեքներու ամրապնդման եւ մշակութային վերելքի խթանման առնչութեամբ, մանաւանդ այսօր, երբ համաշխարհային սոցիալական ճգնաժամը կու գայ արժեքներու բոլոր մշակութային, կրօնական եւ մարդկային արժեքները:

Յ. Պալեան յատուկ կերպով կ'անդրադառնայ խորհրդային իշխանութիւններու տասնամեակներուն անաստեղծեան զոհաբարախօսութեան հայրենի ժողովուրդին հասցուցած ազգային եւ հոգեւոր վնասներուն, երբ մանաւանդ եկեղեցին կարիքութիւնը չունէր լիիրաւ կերպով քրիստոնէական



սկզբունքները քարոզելու Հայաստանի մէջ:

Այս իմաստով այլ 1991ին Հայաստանի անկախութեան վերականգնումը եկաւ նոր շունչ մը տալու եկեղեցական եւ հոգեւոր կեանքին, հաւաքական անոր, որ այդ թուականէն սկսեալ, օգտագործելով խղճի ազատութեան հասկացողութիւնը, Հայաստան մուտք գործեցին նաեւ մայրաքաղաքի քաղաքներ, որոնք իրենց հոգեւորութեան գործելակերպով եկան վնաս հասցնելու անհատներու եւ հաւաքականութեան թէ՛ հոգեւոր, եւ թէ՛ ազգային դերակատարութեան վրայ:

Ազանդներու այս փոստի շրջանցելու համար Յ. Պալեան կ'առաջարկէ պատրաստուած միեւնոյն ժամանակ արդի արհեստագիտական նորութիւններուն հետ քայլ պահող հոգեւորական նոր սերունդի պատրաստութիւնը, հոգեւորականութիւնը, որուն զիջուր նպատակը ըլլայ հայրենի ժողովուրդին մէջ վերածարձել քրիստոնէական ճշմարիտ սկզբունքները եւ իրադրութիւնը, Յ. Պալեանի բառերով, «Հայոց երկրորդ դարձը»:

Ինչպէս որ հոգեւորականութեան յատուկ դերակատարութիւնը մը վերապահուած է հայրենիքի մէջ, նոյնպէս պէտք է ըլլայ արտերկրի իմաստիւ Սփիւռքի մէջ: Հոգեւորականութիւնը պէտք է իր քրիստոնէական ժողովուրդներուն մէջ կը կարգանք նաեւ ուրիշ միաբեր՝ ժողովուրդի եւ եկեղեցւոյ փոխարարութեան, եկեղեցականներու կուսակցութեան հարցին եւ Հայաստանեայց եկեղեցւոյ կառուցման մասին: Այս բոլոր միաբերը կ'իշխան ժամանակ մը ի վեր եկեղեցւոյ խորաններէն եւ մամուլի էջերէն հայ եկեղեցւոյ բարեկարգման մասին եղած արտայայտութիւններուն շրջապահին մէջ: Թէեւ Յ. Պալեան զիջուր արար կ'անդրադառնայ ֆրանսահայ գաղութի եկեղեցական կեանքին, բայց անոր միտքերը կ'առնչուին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ դիմադրուած ընդհանուր մարտահրաւերներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հայ ազգային-քաղաքական միտքը միշտ գիտակցած է, որ ստիպուած է բացուելու դէպի միջազգային բեմ, նեցուկ դառնալու եւ լուծում գտնելու համար մեր բազմերես հարցերուն: Հայ Դատի առաջին գործիչները, Խորաշէլ Օրիէն մինչեւ Նորման, Քրիստափոր Չոպանեան եւ Պօղոս Նուպար, Քարաշահեան եւ Շաւարշ Թորիկեան, յիշելու համար քանի մը անուններ, առանց պետութիւն ունենալու եւ ներկայացնելու, բախած են երկիրներու եւ միջազգային հաստատութիւններու դռները: Այլ հարց է, թէ ինչ եղած է այդ հսկայական ճիգին արդիւնքը: Բայց փաստ է, որ համաշխարհային տարողութեամբ քաղաքական եւ մտաւորական դէմքեր զիրքորոշուած են: Կլասիցիզմ, Առնոլտ Թոյնպի, Անտոյն Ծրանս, Ժան Ժոնէս, Փիեռ Քիլյար, Պրեսանսէ, Ֆրեդերիք Մակլէր, Ռենէ Կրուսէ, Ժազ տը Մորկան, Անտրէ Մանտլիսթամ, աւելի ուշ՝ Մուսա Փրենս, Էմմոն Նալիմ, Իվ Թեոնոն, Շարլ Հեռնիլ, Ժան-Քլոտ Կոտէն, Ռենէ Ռուբէ... Շարքը դեռ կարելի է երկարել: Եւ քանի որ Հայ ժողովուրդի իրաւունքներու վերահաստատման պայքարը դեռ կը շարունակուի, հարկ է միջազգայնացման թափը պահել, աշխուժացնել:

Այս նպատակի յաջողութիւնը լսելով եւ լսուելով կը պայմանաւորուի:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, օսմանցիի տիրապետութեան տակ գտնուող հայաշխարհի մէջ ազատագրական պայքար մղելով հանդերձ, տարած է ազգի խնդիրներու միջազգայնացման աշխատանքը՝ ստեղծելով Փրօ-Արմէնիա շարժումը, մասնակցելով Ընկերվար Միջազգայնականին, ամէն առիթով ներկայացնելով զեկեղեցւոյն եւ տեղեկագիրները: Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումէն ետք հայրենի հողի վրայ վերընձիգած է Դաշնակցութիւնը՝ անխորշով պահելով իր քաղաքական վարքագիծը եւ գործելակերպը: Հայ ժողովուրդին բացառապէս եւ նուազ բացառապէս թշնամիները կ'ուզեն մեկուսացնել զինք եւ մեր հանրապետութիւնը: Գիտակցելով կացութեան՝ Հ. Յ. Դ. Հայ Դատի յանձնախումբերը, դաշնակցական կենսափորձի ուղիղ դիմին վրայ, հրաւիրած են խորհրդաժողով մը, որ պիտի կայանայ Փարիզի մէջ, 2003ին, Յունուարի վերջ եւ Փետրուարի սկիզբը, որուն մասնակցութեան հրաւիրուած են բազմաթիւ երկիրներէ ակաւաւոր դէմքեր, որպէսզի միասնաբար կարելի ըլլայ քննել Հայ ազգի խնդիրները 21րդ դարու շեմին, երբ անցած ենք երկրորդին երրորդ հազարամեակ:

Նման խորհրդաժողով մը ապագայ գործունէութեան ուղղութիւն ու գաղտնախառնելու համար պատմական նշանակութիւն կրնայ ունենալ: Արդարեւ, միջազգային կեանքը յուզող բազմաթիւ հակահարցերու զբեւոյնում եւ բախման պահուն ան պէտք է քննել արդարութեան, մարդկային եւ ժողովուրդներու իրաւունքի, ճշմարտութեան, զարգացման բարդ խնդիրները եւ անոնց անդրադարձը՝ հայրենի կեանքի հոգեւորութեան գոնեմը, որ թուրքերու կը բախէ Եւրոմիութեան գոնեմը, հասկնալի պէտք է ըլլայ բոլորին, հայերուն եւ ոչ հայերուն, որ անոր անդամակցութիւնը կը վերջնականացնէ Հայ, յուն, քիւրտ, ասորի, ալեւու, սուրիացի ժողովուրդներու իրաւագրկումը: Թէ ինչպէս Եւրոպա կրնայ ինքզինք կառուցել ոճրային-ցեղասպանական անցեալի մը հիմերուն վրայ, սոսկ հայոց խնդիրը չէ, այլ՝ համայն մարդկութեան: Հետեւաբար Փարիզի մէջ կայանալիք այս խորհրդաժողովը, որ պիտի կրէ խորհրդանշական

ՔԱՆԱՏԱ

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ՝ ԱՐՍԻՆԷ ԱԹԹԱՐԵԱՆԻ

Անցեալ տարուան Դեկտեմբերին քանատական կառավարութիւնը Հ.Բ.Ը.Մ.ի Մոնրէալի մշակութային յանձնախումբի նախագահ Արսինէ Աթթարեանի շնորհած է «Երիզապէթ Բ. Թագուհի» յորելեանական ոսկիէ մետաղ՝ գնահատելով քանատահայ զազուէթի բարգաւաճման համար անոր տարած գործունէութիւնը:

Արսինէ Աթթարեան մարդկային իրաւանց պաշտպանութեան, կրթութեան հարցերու պարզաբանման, գրական եւ մշակութային ասպարէզներու մէջ ցուցաբերած իր մասնակցութեան համար համապատասխան ճանաչում ձեռք բերած է ինչպէս Քանատայի, նոյնպէս Լիբանանի եւ Հայաստանի մէջ:

Ա. Աթթարեան նաեւ քանատահայ կրթութեան ընկերակցութեան փոխ նախագահն է եւ աշխուժ մասնակցութիւն ունեցած է Քանատայի մէջ հայկական Ժապաւններու առաջին փառատօնի կազմակերպման մէջ: Ան նաեւ Երբքի մէջ մասնակցած է ՄԱԿի ոչ կառավարական կազմակերպութիւններու բազմաթիւ համագործարներու:

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՍՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

• Over Bed Table  
• All Kinds Of Oxygen We Also Provide  
• Laboratory service.  
• Physiotherapist  
• Nurses Aids  
• P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱՄ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐ  
ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ՃԵՆԸ, Բ. ՅԱՐԿ  
ՇՆՆ. (02) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED...  
... OR WHERE YOU NEED.

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՉՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ**

Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին որոշումով՝ Կիրակի, 19 Յունուար 2003, Երեկոյեան ժամը 5:00ին, Եկեղեցւոյ Միութեան Ընթացքին առիթով միջեկեղեցական արարողութիւն պիտի կատարուի Աթթարեանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Արարողութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Լիբանանի քրիստոնէայ համայնքներու բոլոր հոգեւոր պետերը եւ առաջնորդները: Եկեղեցւոյ Միութեան Ընթացքին առիթով Հայրապետական պատգամ պիտի փոխանցուի:

**Լ. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Եկեղեցական արարողութեան ընթացքին շարականներով ու հոգեւոր երգերով ելոյթ պիտի ունենան Լիբանանի տարբեր համայնքներու երգչախումբերը:

Կույ կ'ուղղենք մեր բարեպաշտ ժողովուրդին՝ ներկայ գտնուելու հոգեպարար միջեկեղեցական արարողութեան եւ աղօթելու Զրիստոսահիմն Եկեղեցւոյ միութեան ու աշխարհի խղիւղութեան համար:

*ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ*

**Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Ս. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Կը ներկայացնէ՝

**«ԿՈՍՄՏՍՈՍ» ՔԱՆԵԱԿԵ**

Մանրկերպի ընկերութիւնը մը (Արեւմտեան Պէյրութ) կարիք ունի քարտուղարութիւն մը՝ 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն/արաբերէն լեզուով համակարգիչ գիտնալը պայման: Հեռ. 03-816189 կամ 01-369052 Երեկոյեան:

Սեւե կ'ուզուի փորձառու թեքնիկները եւ ընթացողները:

BT ունենալը նախընտրելի է:

Հեռ. 01-378801-5 կամ 03-800601  
FAX: 01-378800:

**ԿՈՒՉՈՒԻՆ**

• Ամերիկեան էր քոնտրապիլոն ընկերութիւնը մը (Արեւմտեան Պէյրութ) կարիք ունի քարտուղարութիւն մը՝ 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն/արաբերէն լեզուով համակարգիչ գիտնալը պայման: Հեռ. 03-816189 կամ 01-369052 Երեկոյեան:

Սեւե կ'ուզուի փորձառու թեքնիկները եւ ընթացողները:

BT ունենալը նախընտրելի է:


Հեռ. 01-378801-5 կամ 03-800601  
FAX: 01-378800:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
-ԱԶԳԱԿ-ի հետ կապուելու համար ճեղքաւանդել  
ճեղքաւանդ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

**ԾԱՆՈՒՎԻԼԸ**  
• Քոնքոթ Ծառուակի շրջան: Հեռ. 03-886646:

Շաբաթ, 1 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ին մէջ:  
Տոնները սքանալ Գրապոն Նարեկացիէն, Համազգայինի գրախանութէն, «Լ. Շանթ» կեդրոնէն եւ կամ հեռախոսակցել 01/258300 թիւին:

«ԳԻՐՔԵՐՈՒՆ ԳԻՐՔԸ»



ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՅՆԱՍՏՈՒ ԱՐԻՍՏՈՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին՝ Արամ Ա. Կաթողիկոսի հրամանաւ վերջերս լոյս տեսած «Նոր Կտակարան»ի աշխարհաբար նորագոյն բարգմանութիւնը կու գայ ոչ միայն գուժարուելու 1666էն սկսեալ հրատարակուած հայերէն գրաբար ու աշխարհաբար բարգմանութիւններէն վրայ, այլեւ մեր օրերու աշխարհաբարի նոր լեզուամտածողութեամբ, արտայայտչաձեւերով, քերականական ու շարահիւսակաւ-ոգնական հնարաւորութիւններով հարստացած՝ կը նպատակադրէ հայ հաւատացեալին սրտին ու հոգիին ոլորտներէն ներս թափանցել վերանորոգ հայերէնով մը: Աստուածաշունչի ծանօթ բարգմանութիւններէն Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Մեղրի Պատրիարք Գալուստեանի եւ երանաշնորհ այլ հոգեւորականներու գրաբարէ աշխարհաբար փոխադրութիւններէն ետք, ահաւասիկ, հայ մարդուն կը հրամցուի իմաստային հարազատութիւնը, այսինքն՝ բովանդակութիւնը ու մտածումը մամենայն պայմանութեամբ արդի հայերէնի փոխադրող յարաբե- շարտագատ թարգմանութիւն մը: Խօսքէն ու բառէն աւելի իմաստին կարեւորութիւնը րնձայող նոր բարգմանութիւն մը, որ բառերուն նշգրտութիւնը, դարձուածքներն ու ոճային բարեմասնութիւնները յարգելով հանդերձ ջանացած է պահպանել մերոքայ աշխարհաբարի առանձնատեսակներն ու թարմութիւնը եւ Աստուծոյ Մունչին յանդիմանելի պատգամներն ու խորհուրդները անգամ մը եւս հնչեցուցած, բայց այս անգամ անմիջական ու բարձրուն ժողովրդական պարզ լեզուով մը:

Ինչպէս արագորէն կ'ըսուի այս նորագոյն բարգմանութիւնն ունի տուած զրգապատճառները պարզաբանող «Երկայ թարգմանութեան մասին» խորագրեալ յառաջաբանին մէջ, անանուն թարգմանիչներուն կողմէ՝ յատուկ նիզք թափուած է, որ լեզուի պարզացումով, դարձուածքային նախադասութիւններէ հրաժարումով, գրական նոր ձեւերու որդգրումով, ենթակայաներու եւ դերբայներու յստակացումով, ժամանակավրէպ կըլիներն ու չափերը իրենց մերօրեայ համարթերներու փոխադրումով պահպանւի արդի աշխարհաբարի համը ու բոլորը: «Մեր ժողովուրդը ստուարագոյն զանգուածին մատչելի դարձնելու համար անոր անմիջական ընկալումը»:

Ըսինքն՝ «անանուն թարգմանիչներ» եւ ուզեցինք շեշտել այս պարագան, որովհետեւ միայն «թարգմանիչներ» գոյականով իրենց ինքնութիւնը պարզաձեւ-քողարկած մտքի եւ հոգիի խնորոյ առարկայ մշակները մնացած են հաւատարիմ դարաւոր աւանդութեան մը: Յար է նման մեր անայն բարգմանիչներուն գործն ու աշխատանքը իրագործողէն գերիվեր սեպոյդ այս թարգմանութեան հեղինակները նաեւ ընդունուած են թարգմանիչական ստեղծագործ աշխատանքին կըռնոթին, ոլորտներուն եւ ողջ տարրութեան մէջ եւ նոյնիսկ կամաւորաբար հրաժարած «գիրս մնայ յիշատակող» ընկալեալ արձանագրութեանէ:

Աւելի քան զարբար թարգմանութեան զուգահեռ յունարէն սկզբնաղբեր նաեւ իրեւ թարգմանութեան հիմք ու աղբիւր որդեգրելով «Նոր կտակարան»ի այս նորագոյն թարգմանութիւնը կատարած է նաեւ ձեռագիրներուն մէջ գոյութիւն ունեցող արքեպիսկոպոսներու այնպիսի յստակացումներն ու նշումներն, որոնց առիթով իբրեւ «օժանդակ աղբիւր» որդեգրուած զանազան այլ լեզուներու, ինչպէս նաեւ հին ու նոր հայերէն հրատարակութիւններու օգտագործումը կ'արտօնէ մեզի ըսելու, թէ հայ հաւատացեալին սնարին կողմէն դրուած է միշտու թափանցիկ Լեւտարան մը, որ կը յատկացուի թէ իր պարզութեամբ եւ թէ գիտական բարգմանութիւններու վայել նշգրտութեամբ:

Բայց ամէն բանէ առջեւ եւ վերջ՝ Աստուծոյ յանդիմանելի շունչով, որուն շնորհիւ 27 գիրքերէ կ'ազմուած Աստուածաշունչը կը շարունակէ լուսաւորել համայն մարդկութեան նշմարագոյն նամբան, մնալով բոլոր ժամանակներու անփոխարինելի, անկրկնելի, անքերի, եզակի եւ յանձարաբար «գիրքերուն գիրքը»...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Գրական էջ

ՀԱՄԿԱՔԱՂ



Տիպերի ստեղծումէն ի վեր մարդկութիւնը յուզած բոլոր հարցումներուն ամբողջական պատասխան բերած Աստուածաշունչէն քաղուած պարզ, անգանձոյձ, ուղղակի, բայց միաժամանակ բազմախորհուրդ ու թելադրական այս հատուածները կրնան ամբողջական գաղափար մը տալ աշխարհի բոլոր լեզուներու թարգմանուած Աւետարանին մասին:

Առականները բնորոշող այլաբանական գրաչափեամբ, խոհականութեամբ, իմաստասիրական կնիքով եւ բանաստեղծական թելադրականութեամբ յատկանշուող էջերու այս փունջը, անկասկած, պիտի ըլլայ գեղեցիկ հրաւեր մը, որպէսզի Աստուածաշունչը միշտ ամենօրեայ ներկայութիւն եւ կեանք դառնայ մեր կեանքին մէջ:

ԱՆՆԱՐՔԻ ԼԱՅԱՆ

Դուք էք աշխարհի լոյսը: Լեւոն վրայ շինուած քաղաք մը չի կրնար պահուել: Ոչ ոք ճրագը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ: Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս չողջ մարդոց առջեւ, որ անոք ձեր լոյսը գործնելի տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է:

ՈՐՄԷ՝ ՎԱՆՆԱՆ

Մի՛ վախճաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախճէք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ: Երկու ճնճողուկը հինգ զահեկան չ'արժէր. եւ սակայն անոնցմէ մէկն իսկ գետին չ'իջնար առանց ձօրը գիտութեան: Գալով ձեզի, ձեր գլխուն իւրաքանչիւր մագն իսկ համբուրուած է: Հետեւաբար մի՛ վախճաք, որովհետեւ դուք բոլոր ճնճողուկներէն աւելի արժէք ունիք Աստուծոյ աչքին:

Ո՞՞ Է ՄԵԾԸ

Վստահ գետցէք, որ եթէ չփոխուիք եւ մանուկներու պէս չըլլաք, երկինքի արքայութիւնը պիտի չմտնէք: Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս կը խոնարհեցնէ՝ անիկա է մեծը երկինքի արքայութեան մէջ: Եւ ով որ այսպիսի մանուկ մը իմ անունովս կ'ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ:

ԳԱՅԾԱԿՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՅ

Ով որ ինծի հաւատացող այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէ, աւելի լաւ կ'ըլլայ, որ գայթակղեցնողին վիզին մեծ երկանաբար անցուի եւ ծովուն խորքը ձգուի՝ ընկղմելու համար: Վա՛յ աշխարհին, քանի՜ գայթակղութիւններ անպայման պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով կ'ըլլին գայթակղութեան մէջ կ'իջնան: Եթէ ձեռքը կամ ոտքը թեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ ու նետէ գայն, որովհետեւ աւելի լաւ է մէկ ձեռքով կամ կող մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենալ եւ ինչնալ յաւիտենական կրակին մէջ: Եւ եթէ աչքը թեզ կը գայթակղեցնէ՝ հանէ եւ նետէ՝ գայն. աւելի լաւ է միակնի մտնել կեանք, քան թէ երկու աչք ունենալ եւ ինչնալ դժոխքի կրակին մէջ:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ՛ Երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, բայց միայն՝ Հայրը: Եւ ինչպէս պատահեցաւ Նոյի օրերուն, նոյնը պիտի պատահէ Մարդու Որդիին գալուստի ժամանակ:

(...) Ահա այդպէս պիտի պատահէ Մարդու Որդիին գալուստին ժամանակ: Այն ատեն, երբ գալուստին մէջ երկու հոգի ըլլան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ երկու կին մէկ ջաղացքի մէջ ցորեն աղան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի: Արթո՛ւն մնացել, որովհետեւ չէք գիտեր, թէ ձեր Տէրը երբ կու գայ: Այս ալ գիտե՛ք, որ եթէ տանաբար գիտնար՝ թէ գողը ո՞ր ժամուս պիտի գայ, արթուն կը մնար եւ թոյլ չէր տար որ գողը պատը քանդելով տունը մտնէ: Այս պատճառով, դուք ալ պատրաստ

եղէք, որովհետեւ Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ:

ՄԱՆՆԵՍԻ ՀԱՏԻԿԻՆ ԱՍՎԸ

Ի՛նչ բանի կրնանք նմանցնել Աստուծոյ արքայութիւնը եւ կամ ի՞նչ օրինակով կրնանք բացատրել: Անիկա կը նմանի մանանեխի հատիկին, որ հողին մէջ ցանուած առե՛ն՝ երկրի վրայ եղող սերմերէն մտնէ՛ն փոքրն է: Բայց երբ սերմանուի, կը բուսնի եւ բոլոր տունկերէն աւելի մեծ կ'ըլլայ: Եւ յայնքան մեծ ոստեր կ'արձակէ, որ անոր շուքին տակ երկինքի թռչունները կու գան եւ բոյն կը շինեն:

ՈՒՐԻՇՆԵՐԸ ԶԳՄԵՆ

Մի՛ դատէք, որպէսզի Աստուած ալ ձեզ չգատէ: Մի՛ դատապարտէք, որպէսզի աստուած ալ ձեզ չդատապարտէ: Ներեցէ՛ք ուրիշներուն եւ Աստուած ալ ձեզ պիտի ներէ: Տու՛՛ք եւ Աստուած ձեզի պիտի տայ: պիտի տայ լաւ չափով, բերնէ՛ բերան, գեղուն ոտաւորութեամբ: Ինչ չափով որ ուրիշները չափէք, նոյն չափով Աստուած ձեզ պիտի չափէ:

Օրինակ մըն ալ տուեալ անոնց. Միթէ՛ կոյրը կրնայ ռուրջ կոյր մը առաջնորդել: Ի՞նչ՞ որ երկուքն ալ փոսը կ'իջնան: Աշակերտը ուսուցիչէն գերիվեր չէ, բայց կատարեալ պատրաստութիւն ունեցող աշակերտը իր ուսուցիչին նման պիտի ըլլայ:

ԱՐԹՈՒՆ ԾԱՌԱՆԵՐ

Պատրաստ եղէք, ձեր գոտինըրը ձեր մէջընքն ամբողջացած եւ ճրագները՝ վառած, նման այն ծառաներուն, որոնք կը սպասեն, որ իրենց տէրը հարսանիքէն վերադառնայ, որպէսզի երբ տէրը գայ եւ դուռը գարնէ՛ իրենք անմիջապէս բանան դուռը: Երանի՛ այն ծառաներուն, որոնք տէրը երբ կու գայ՝ արթուն կը գտնէ գիրենք: Կ'ըսեմ ձեզի, թէ ինք իր մէջընք գոտի պիտի կապէ, պիտի նստեն զիրենք եւ ինք պիտի սպասարկէ անոնց: Երանելի են այն ծառաները, որոնք տէրը գրենք արթուն կը գտնէ, երբ կէս գիշերին կամ աւելի ուշ տունը դառնայ: Բայց այս ալ գիտեցէք, որ եթէ տանտէրը գիտնար, թէ գողը ո՞ր ժամուն պիտի գայ, արթուն կը մնար եւ թոյլ չէր տար, որ գողը պատը քանդելով տունը մտնէ: Ուրեմն, դուք ալ պատրաստ եղէք, որովհետեւ Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ:

ԱՆՊԵՏ ԱՐԸ

Լաւ բան է աղբ. բայց եթէ իր համր կորսնցնէ, ինչո՞վ պիտի աղեն գայն: Ո՛չ հողին օգտակար է, ոչ ալ կարելի է պարտաւորեցնել չինքն, այլ՝ գայն կը թափեն: Ականջ ունեցողը թող լսէ:

ԳԷՊԻ ԳՈՂԳՈԾԱ

Երուսաղէմի՛ աղջիկներ, մի՛ լաք ի՞ժ վրաս, այլ լացե՛ք դուք ձեր եւ ձեր գաւաակներուն վրայ: Որովհետեւ օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ըսեն. «Երանի՛ մամուլներուն, այն կիններուն՝ որոնք գաւակ չ'ունան եւ չ'ընեցուցին»: Այն ատեն մարդիկ լեռներուն պիտի ըսեն՝ «Մեր վրայ ինչէք»: «Մեզ ծածկեցէք», պիտի ըսեն բլուրներուն: Որովհետեւ եթէ այսպէս կը վարուի դալար փայտին հետ, հապա ի՛նչ պիտի ընեն չորին:

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆԻ ՏԱՐՈՒՆ ԱՈՒԹՈՎ

ՈԳԻՒՆ, ԵՒ Ո՛Ղ ՏԱՌԻՆ

Ամէնէն պարզ հաւատացեալին մինչեւ ամէնէն մեծ խորհողը, Աստուածաշունչին նկատմամբ չի՛ նուագեցնիր իր խոր յարգանքը, իբրեւ անկրկնելի գիրք մը մարդկային ցեղի պատմութեան մէջ: Առանց ըլլալու պատմութեան ղէպերը ներկայացնելու համար դրուած գիրք մը՝ պատմագիրք է ան, իրական մարդոց ու ժողովուրդներու մասին ըլլալով: Առանց ըլլալու աշխարհազրուածեան քարտէս կամ աշխարհի թագաւորութեանց անցեալի սահմանագիծերը ճշգրտ վաւերացնող՝ նախախնամական եզրայանգումներ կը կատարէ ան, հին, նոր ու ապագայ ժամանակներու համար: Ի վերջոյ, առանց ըլլալու աստուածաբանութեան դասագիրք մը՝ Աստուծոյ մասին գրուած բոլոր գիրքերուն աղբիւրն է ան, անզերականցելի մնալու հանգամանքով ի վերուստ երաշխաւորուած:

Աշխարհի հռչակաւոր գիտնականներէն մին ըսած է, որ «ոչ մէկ կառավարութիւն ունեցած է սահմանադրութիւն մը, որուն մէջ ժողովուրդին՝ չահերն այնքան լայնօրէն նկատի առնուած են, որուն մէջ կառավարիչներու առանձնաշնորհներէն աւելի, պարտականութեանց վրայ շեշտը դրուած է, որքան Աստուածաշունչին մէջը»:

ՇՈՒՆՁԻ մը առկայութիւնը այս Գիրքի իւրաքանչիւր էջին վրայ, հեղինակութեան ամէն իրաւունք իրեն կը վերապահէ, զայն գրի առնողները վերաճելով հաւատարիմ գրագիրներու: «Առ ոտս Վարդապետին» ծնկաչոք նստած գրիչներու պատկերը լաւագոյն կը յարմարի Աստուածաշունչի բոլոր գիրքերու հեղինակներուն, որոնք Շունչի մը թելադրութիւններուն գրառումը կատարեցին երկրաւոր կեանքի ընթացքին, իրենց հաւատքի թրանսպարենթ թափանցելով, աներեւոյթ աշխատեցան թիւնատուր եղէ՛ք:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, գլխաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբաբանագոյն Վեհափառ Կաթողիկոսին, 2003 տարին հռչակեց ԱՍՏՈՒԱԾՆՈՒՆԻՑԻ ՏԱՐԻՆ: «Գիրքերուն Գիրքը» կողմէն այս հատորը հայ տունին զարդը չէ՛ պարզապէս, ոչ ալ զրադարաններու մէջ շարուած հատորներու զօրաբանակի հերթին մէջ կանգնած սովորական գինւոր մը: Այս Գիրքը հայ հոգիի գրագրանի միակ գիրքը դարձաւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ երախտաւորներու երկունքէն ծնելէն անմիջապէս ետք: Այնուհետեւ թարգմանիչ սերունդին կողմէ՛ հայացուած Աստուածաշունչը բազմաթի՛ւ օրինակներով պիտի ծաղկուէ՛ր հայ մանրանկարիչներու ու անուանի գրիչներու կողմէ՛ն:

«Աստուածաշունչն»՝ միայն հայերէն լեզուով արտայայտութիւն գտած անունն է այս Գիրքին, որ բոլոր անուններէն աւելի բովանդակալից ու գորեղ իմաստ մը տուած է անոր: Այդ Շունչով ապրած ու գործած է մեր ժողովուրդը իր ողջ պատմութեան ընթացքին: Այդ Շունչը թեւածած է միշտ մեր ազգի ու հայրենիքի կեանքին վերեւ, իրմով լեցնելով ու հարստացնելով զանոնք:

Աստուածաշունչի մէջ արձանագրուած պատգամները սովորելու ու գանձի գործարարուտը զոգ կանոններէն առաջինը ամբողջութեամբ տկար է ու թերի՝ առանց երկրորդին (հմմտ. Մտ 13.20-21, Ղկ 12.47): Սակայն, երկրորդ կանոնը իր չափազանցուած բոլոր արտայայտութիւններուն մէջ խոցելի է, ու ծայրայեղ երեւոյթ մը կը պարզէ: Աստուածաշունչի կանոններուն հետեւը «հին» ու «նոր» ժողովուրդներուն ուղղուած պատգամը այս երկու կանոններուն հետեւի է, ինչպէս կը վկայեն Հին Ուխտի մարգարէներն ու Աստուծոյ ընտրեալ անձերը՝ «Լուի՛ իսրայէլ» (հմմտ. Բ. Օր 6.4-5), «Աստուծոյ պատուիրանները պահէ՛ք» (հմմտ. Ժդ 12.13): Իսկ Նոր Ուխտի Մեծ Ուսուցիչը՝ Քրիստոս, յաճախակիօրէն կը յիշեցնէ որ մարդիկ արգէ՛ն սորված պէտք է ըլլան այն բաները, որոնք Սուրբ Գիրքին մէջ գրուած են: «Չէ՛ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը» կ'ըսէ Յիսուս գրեթէ յանդիմանական չեշտով (հմմտ. Մտ 21.16): Սակայն այս բոլորով հանդերձ, Սուրբ Գիրքին ճամբով Աստուծոյ պատուիրաններուն գործադրութիւնը տառացիօրէն ըմբռնելու պարտադրանքին առաջ չի՛ դրուիլ հաւատացեալ մարդը: «Աւելի՛ հաւատացեալ» ըլլալու ձգտումը մարդուն, ղէպի կատարելութիւն ընթացող ճամբուն մէջ կը դնէ գայն, սակայն նոյն ճամբուն նաեւ կործանումի կ'առաջնորդէ մարդը, երբ ան գերին դառնայ Աստուածաշունչի ՏԱՐԻՆԵՒ ԵՒ Ո՛Ղ ՏԱՐԻՆ:

Ուրեմն, Տառի՛ն, թէ ոգիին: Յիսուսի տուած մեկնաբանութեամբ՝

Ուգի՛ն, եւ ո՛չ Տառին:

Փարիսեցիներուն ուղղած Յիսուսի քննադատութիւններուն մեծամասնութիւնը այս նիւթը կը շօշափէ, ձեւակերպութիւններէ ու աւելորդ ժամավաճառութիւնէ ազատարարելու համար գանձի: Հազուադէպով ծոպերը երկարող (Մտ 23.5) ու ժողովարաններուն մէջ առաջին աթոռները գրաւողներուն (Ղկ 11.43), տասանորդ տաճարին կանոնաւորաբար յատկացողներուն (Ղկ 11.42), ծնողներուն տրուելիք գումարը Աստուծոյ տաճարին նուիրողներուն (Մր 7.11), ժողովուրդին գիմաց իրենց աղօթքը երկարելով բարեպաշտ երեցողներուն (Մտ 23.14), չարախը երկու անդամ խտուի ծոմ պահող (Ղկ 18.12) ու Սուրբ Գիրքին մէջ Աստուծոյ տուած պատուիրաններուն բառ առ բառ հետեւելով (Մտ 19.20) օրինաւոր երեւի փորձող Օրէնքի ուսուցիչներուն ու փարիսեցիներուն պարզապէս ԿԵՂՄԱՒՈՐՆԵՐ պիտակը կը կպցնէ Յիսուս:

Աստուածորդիին ամբողջ քարոզութիւնը մարդը Օրէնքի գերութեանն ու ստրկութեանն զուրս բերելու կը միտնէ: Աստուծոյ հաւատացողը ազատ պէտք է ըլլար անկէ եւ ո՛չ թէ շարունակէր անոր ծառայել, փոխանակ Տիւրը: Մարդուն շնորհած արգազութեան դրօշակիւրդ եզաւ Յիսուս, յարգելով իր հետեւորդներուն ազատութիւնը: Նոյնիսկ Աստուծոյ արքայութիւնը ժառանգել փափաքող անձին ըսաւ.

ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ԶԻԹԹԵԱՆ

Շար.՝ էջ 8

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱՏԱԳԻՏՈՒԹԻՒՄ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## «ԵՈՒՖՕ»ՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻԻԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Բրիտանիայ կառավարութիւնը գործադրութեան դրաւ արտերկրային էականներու երեւումներու մասին իր արխիւը համացանցի միջոցով հանրութեան հասանելի դարձնելու որոշումը:


Համացանցին վրայ տեղադրուած այս արխիւային նիւթերուն ամէնէն աչքառուն կը հանդիսանայ Ռէնալչէմի թղթածրարը, որ կը ներկայացնէ վկայութիւններ՝ թուող սկաւառակի մը մասին, որ երեւցած էր 1980ին, Սաֆօքի մէջ: 20 սկանատեսներ, որոնց կարգին՝ ամերիկացի գինուորականներ, յայտնած էին, թէ յաջողաբար երկու գիշերներ լուսաճառանջ թուող սկաւառակ մը տեսած էին անտառի մը մէջ:

Բրիտանիայ կառավարութիւնը կարգ մը արխիւներու հանրութեան հաստատութիւնը արգիլող օրէնագրութիւնը բարեփոխելու գործընթացին մէջ կը գտնուի, եւ այս արխիւի բացայայտումը կարելի է նկատել այս շրջագիծէն ներս առնուած քայլ:

Թուող սկաւառակներու նուիրուած այս արխիւը կարելի է «թերթատել» այցելելով [www.lcd.gov.uk](http://www.lcd.gov.uk) հասցէով կայքը:

## «ՍՓԷՄ» Ե-ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՆԱՄԱԿԱՏՈՒՓԻ ԱՆԿՈՉ ՀԻՒՐԵՐԸ

Ե-նամակի դրութիւնը յեղաշրջեց հաղորդակցութիւններու ընդհանուր քանի մը երկվայրկեանի մէջ գրեթէ ձրիօրէն աշխարհի որեւէ անկիւնը գտնուող անձի մը կապուելու առիթ ընձեռելով: Սակայն այս դրութիւնը եւս շահագործուեցաւ առեւտրական ապօրինի ձեւեր որոնողներու կողմէ, որոնք կողմնակի կերպերով ձեռք ձգուած բազմամիլիոն ե-նամակի հասցէներու սկսան ծանուցումներ ուղարկել: Երեւոյթը այնքան տարածուեցաւ, որ համացանցը օգտագործողը յաճախ օրական տասնէ աւելի ե-նամակներ կը ստանայ ընկերութիւններու կողմէ, որոնք ինքնակոչ կերպով այս կամ այն ար-



ցառումներու սփէմ ե-նամակներէ կարելի է համեմատաբար ազատ մնալ: Այսպէս, օրինակ, անձնական ե-նամակի հասցէով համացանցի վրայ ձրի ծառայութիւններու բաժանորդագրու-



ապրութիւնը կամ «ծառայութիւն» որոշած են մատուցել աշխարհին: Ե-նամակատուութիւնը ծանուցանող եւ յաճախ իր բեռան տակ զանոնք կը քննող այս երեւոյթը, որ առաւել ծանօթ է «սփէմ» անունով, հսկայական վնասներ կը հասցնէ, եւ «սփէմ» ե-նամակներու թիւը անցնող տարի նախորդ տարուան թիւին կրկնապատուել կը եղած է:

Տակաւին չենք խօսիր «սփէմ» ե-նամակներու կարեւոր մէկ համեմատութեան պարունակած ծանուցումներուն մասին: պոռնկագրական կայքերու բաժանորդագրութեան հրաւերներ, կայքերու հասցէներ եւ յաճախ մարդու մտքէն չանցած առաջարկներ, բաժանորդագրութեան կոչեր եւ «սարքեր» կը հրամայեն ե-նամակի հասցէ ունեցողին, եւ այս բոլորը՝ առանց տարիքի եւ սեռի խտրութեան:

Ե-նամակի դրութիւններ տարածողը ընկերութիւններ տեւաբար կը պայքարին այս երեւոյթին դէմ՝ «Ֆիլքըր»ներ տեղադրելով, «սփէմ» ե-նամակներ ուղարկող հասցէներ բացայայտելով եւ անոնց ե-նամակատուութիւնը արգիլելով եւ այլն...: Սակայն ինչ միջոցառումներու ալ զիմուի, «սփէմ» ուղարկողներ միշտ քայլ մը առաջ կը գտնուին եւ կը շարունակեն իրենց աղօթքով ծանրաբեռնել համացանցը:

«Սփէմ» ե-նամակներէ խուսափելու համար կարելի է նաեւ օգտագործել ե-նամակի «Ֆիլքըր»ները: Օրինակի համար, «Հաթմէյ»-ի եւ «Եակոն»-ի ե-նամակի դրութիւնները առիթ կ'ընծայեն ենթակային ճշգրիտ, թէ ո՞ր հասցէներէն եկած ե-նամակները պէտք է ուղարկել ե-նամակատու:


Սակայն արմատական լուծումի մը չգոյութիւնը չի նշանակեր, թէ կարելի չէ հակադիմադրել տակ առնել ձեռք ե-նամակատուութիւնը: Հե-տեւելով քանի մը միջո-

ցառումներու սփէմ ե-նամակներէ կարելի է համեմատաբար ազատ մնալ: Այսպէս, օրինակ, անձնական ե-նամակի հասցէով համացանցի վրայ ձրի ծառայութիւններու բաժանորդագրու-

## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԷՓՍԸՆ ՍԹԱՅԼԸՍ ՖՈՒԹՕ 925» ՏՊԻՉԸ

Թուագրային քամերայով լուսանկարչութիւնը արդէն շատերու նախասիրած ժամանցը դարձած է: «Էփսըն» ընկերութեան հրապարակ իջեցուցած այս տպիչը բարձրորակ լուսանկարներ թուղթին յանձնելու դժուարին մարտահրաւէրը առած է իր «ուսերուն»: Տպիչին մէջ տեղադրելով թուագրային քամերային «յիշողութեան քարտը» կարելի է որեւէ նկար տպել քանի մը կոճակի սեղմումով:




## ՓՈՔՐԱԾԱՒԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՄԸ...

«Տէլ Օփթիկալ»-ը կը միտնի փոխարինել գրասենյակներուն մեծ մասը գրաւող համակարգիչը: Արդարեւ, նրա-կազմ այս համակարգիչը, որ շատ բանով ետ չի մնար աւանդական «ադդա» համակարգիչին, ունի հաստափոր գրիք մը ծաւալը եւ հորիզոնական կամ ուղղահայեաց ձեւով կրնայ տեղադրուիլ գրասենյակին տակ կամ դարակի մը մէջ: Ան օժտուած է տափակ պատաստով (ֆլէք սքրին) եւ 6 «եռ. էս. պի. 2,0 փորթ»երով:



## ... ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ԿԱՊՈՒԱԾ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ



Եթէ պատրաստ էք 6000 տողի շուրջ գումար մը յատկացնելու կարի մեքենայի մը դնման, ապա «Արիսթա 200 Ի»-ն, որ կարելի է համարել կարի մեքենաներու «Ֆերրարի»ն, լաւագոյն ընտրանքն է: Մեքենան օժտուած է համակարգիչի լիազոյն պատաստով, որ նաեւ կը գործէ հպումի «հրահանգներու» հիմամբ (թաչ - սքրին): Սարքը օժտուած է նաեւ «Սի. Տի. Ռոմ» տրայլովով, ինչպէս նաեւ՝ «մոտեմ»ով, որուն շնորհիւ կարելի է համացանցէն արձանագրել կարի տարբեր մեթոտներ: Սարքը «Կը իշէ» իր միջոցով կատարուած վերջին 15 կարի գործողութիւնները, եւ զայն կարելի է դիւրաւ պատշաճեցնել կարողին պահանջներուն:

## Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

## «ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, Միւշեի ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳԵՐԸ՝ բացատրութիւն եւ: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

## ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՉԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Երբեք մտածած էք, թէ աշխարհին վերջը ի՞նչպէս պիտի գայ. փաստօրէն բազմաթիւ մարդիկ ոչ միայն երկար խորհած են այդ մասին եւ՝ ուսումնասիրութիւններ կատարած, այլ նաեւ իրենց բացայայտումները տեղադրած են համացանցին վրայ:

- [www.prophecies.org](http://www.prophecies.org)
- <http://nostradamus.frechomepages.com>
- [www.ishipress.com/666htm](http://www.ishipress.com/666htm)
- [www.revelation13.net/index.html](http://www.revelation13.net/index.html)

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ  
2003 ՏԱՐԻՆ ԿԸ ԸՈՉԱԿԷ  
«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ»  
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊՍՏՊԱՒ ԸՆԹԵՐՈՒՄ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՉ  
Կիրակի, 19 Յունուար 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յընթացս Ս. պատարագի, պիտի ընթերցուի Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի հայրապետական պատգամը:  
Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին՝ ներկայ գտնուելու Սուրբ եւ ամճառ պատարագին եւ ունկնդրելու վեհափառ հայրապետին պատգամը:

[www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)

[www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com)

# Մանկապատանեկան

## ՏԵՍԱԿԱՒՈՐ ՓԱԹԻԼՆԵՐ

Գիտե՞ր, թե անկարելի է գտնել նոյնանունով երկու փաթիլներ, գիտնալով հանդերձ, թե բոլոր փաթիլները կը կազմուին փոշիի հատիկի մը շնորհիւ: Ի՞նչ է անոնց գաղտնիքը:



Ձիւնը ինքնին մեծ գաղտնիք մըն է: Ի՞նչպէս կարելի է բացատրել, թէ աշխարհի վրայ գոյութիւն չունին նոյնանունով երկու փաթիլներ: Այս գաղտնիքը լուսարանելու համար գիտնականները ուսումնասիրած են ջուրին ընթացքը ամպին մէջ:

Անոնք նշարած են, թէ ձիւնը սառած ջուր չէ: Փաթիլ մը կը կազմուի ջուրի շոգիի եւ փոշիի հատիկի մը ներկայութեամբ: Երբ այս երկու տարրերը իրարու միանան, բերեղ մը կը կազմեն: Առանց փոշիի հատիկին, ջուրը կը մնայ հեղուկ կամ կազային (չոգի) վիճակի մէջ: Մինչդեռ ամպին մէջ գոյութիւն ունեցող ջուրին շոգիին կրնայ բերեղանալ եւ սառիլ փոշիի հատիկի մը շուրջ: Ցատուկ փոշի մը, որուն կառուցը բաւական նման է սառույցի կառուցին: Անշուշտ եթէ ջուրի կաթիլ մը հանդիպի արդէն կազմուած բերեղի մը, ան ալ իր կարգին բերեղ պիտի դառնայ:

Պայմանները ամբողջացած են, եւ սառույցի բերեղ մը կազմուած է: Ըստ իր կազմութեան պահու ջերմաստիճանին, այդ բերեղը պիտի ստա-

նայ կարելի չորս գիտաւոր ձեւերէն մէկը: բարակ տախտակի նման, վեցանկիւն սիւնի նման, աստղի կամ ասեղի նման: Հակառակ որ ան իր էջքի ընթացքին կ'անցնի տարբեր ջերմաստիճաններով շրջաններէ, ընդհանրապէս կրնայ պահել իր սկզբնական կերպարանքը:

Սակայն, եթէ ան անցնի շրջանէ մը, որ կրնայ պատճառել բերեղի ուրիշ ձեւի մը կազմուելը, ան կը կերպարանափոխուի, եթէ այդ ձեւը բաւական մօտ է իր ձեւին: Ամէնէն ընթացիկ նոյնանուն գոյգ ձեւերն են վեցանկիւն սիւնը եւ վեցանկիւն բարակ տախտակը: Արդիւնք, սիւնի - ձեւով փաթիլ մը, որուն իւրաքանչիւր կողմը ունի... վեցանկիւն բարակ տախտակի ձեւ:

Մեր այս բերեղը, տակաւին փաթիլ մը չէ: - 25 ջերմաստիճանին ան կը փայլփլի երկիւնքին մէջ:

ան այնքան թեթեւ կ'ըլլայ, որ մենք հազիւ կը գզանք անոր ներկայութիւնը, երբ մեր քիթին աստղի կամ ասեղի նման: Հակառակ որ ան իր էջքի ընթացքին կ'անցնի տարբեր ջերմաստիճաններով շրջաններէ, ընդհանրապէս կրնայ պահել իր սկզբնական կերպարանքը:


Երբ փաթիլ մը շատ ծանր է (1 սմ. քանի մը միլիկրամի պարագային), ան երկիւնքէն կ'ըլլայ 1 - 2 մեթր, մէկ երկվայրկեանի արագութեամբ: Ան անմիջապէս կը հալի, երբ ջերմաստիճանը կը դադարի նուազ ըլլալէ: Սակայն այս գործողութեան ընթացքին ան կը պաղեցնէ իր շուրջը գտնուող օդը: Բան մը, որ սքանչելի է միւս փաթիլներուն համար, որոնք տակաւին երկիւնքէն կ'ըլլան: ձիւնը կը շարունակուի:

## ԱՅԼԱԶԱՆ

● Գիտէ՞ր, թէ 70 միլիոն կայծակ կ'իջնայ ամէն տարի Պրագիլի վրայ: Ան այն երկիրն է, ուր ամէնէն շատ կայծակ կ'իջնայ:

● Հերի Փոթրի գիրքերը միայն կարդացողներուն հաճոյք չեն պատճառեր: Անոնք մեծ ուրախութիւն կը պատճառեն նաեւ անգլիացի աւել ծախողներուն: Այս վերջինները սկսած են մեծ թիւով աւելնել ծախել, որովհետեւ Փոթրի գիրքերը կարդացող պատկանէրը իրենց ծնողներէն խնդրած են աւել ունենալ իրենց հերոսին՝ Հերիին նմանելու համար:

● Պարոն Լիու Եռնկ - Եանկ եւ իր կինը Եանկ Ուան նոր մրցանիշ մը արձանագրած են: Այս երկու չինացիները կը կազմեն աշխարհի ամէնէն ծեր գոյգը: Անոնք ամուսնացած են 85 տարին արտաջ, ունեցած են 110 զաւակներ, թոռնիկներ եւ ծոռեր:



● Գերմանացի ճարտարագէտ մը հնարած է ուսող բարձով օժտուած գրասեղան մը: Ասոր համար պէտք է կոխել սեղանին տակը գետեղուած կոճակի մը վրայ եւ մեծ բարձ մը ինքնաբերաբար կ'ուռի: Գծախտաբար քիչ հաւանական է, որ այս գիտութեամբ արտադրանքներն ներս:



● Ճափոնական ընկերութիւն մը հնարած է գրպանի համակարգիչ մը, որ կարելիութիւնը կու տայ հասցէներ փոխանակել իրարու ձեռք թօթուելով: Այս համակարգիչները իրարու կ'ուղարկեն շատ թեթեւ ելեկտրական հոսանք մը, որ կ'անցնի մարմիններուն ընդմէջէն ձեռք թօթուելու ժամանակ:

## ԻՆՉՈՒ ԶԻՒՆԸ ԾԵՐՄԱԿ Է

ձերմակ լոյսը գոյններու խառնուրդն է: Երբ ան առարկայ մը կը լուսաւորէ, կարգ մը գոյներ չեն յափշտակուիր լոյսին կողմէ, այլ անոնք կը ցոլացնեն: Օրինակի համար, մեզի կանաչ թուղ տերեւ մը կը պահէ լոյսին բոլոր գոյները, բացի կանաչէն: Մինչ լուսաւորուած ջուրի կաթիլ մը կը բանի պրիսմակի մը նման, լոյսին բոլոր գոյները կ'երեւին: Այս կաթիլները բազմապատկեցէք երկիւնքի մէջ եւ պիտի ստանաք... ծիածան մը:

Իսկ ինչ կը վերաբերի ձիւնին, լոյսը չի թափանցեր փաթիլին բերեղեայ կառուցին մէջ: Ան կը ցոլացուի, հետեւաբար ձերմակ լոյսը ետ կը զրկուի:

«ՊՁՏԻԿ - ԱՁՏԻԿ»Ի ԺԱՄԱՆՑԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Գլուխները եւ մարմինները - 1 - գ. 4 - ա. 5 - բ:

Բարձրութիւնները - 68, 84:  
 + եւ - 4 + 5 + 9 + 6 + 8 - 7 = 25  
 6 - 3 + 5 + 0 - 8 - 2 = 7  
 8 + 3 - 6 - 5 + 2 + 1 = 3  
 3 + 5 + 2 + 5 + 6 + 8 = 29

**ՅԱՅՏՆԱԲԵՐԷ ԶԱՒԱԿԻԴ ԹԱՔՈՒՆ ԶԻՐՔԵՐԸ**


Եթէ ձեր գաւազը ունի գծելու ձիրք եւ կ'ուզէ գայն գարգացնել, ան կրնայ հետեւիլ

**ԱՆՁՆԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐՈՒ**

Դասընթացներուն կրնան մասնակցիլ ամէն տարիքի փոքրեր եւ պատանիներ՝ անհատական եւ խմբային դասընթացներ

Մանրամասնութեան եւ արձանագրութեան համար դիմել՝ Մզիեր, «Աղբալեան-Շ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի քիւ 169 շէնք, հեռ.՝ 03-944686:


## Ժ Ա Մ Ա Ն Յ




Կետերը իրարու միացուր 1 - 41՝ գտնելու համար պահուած պատկերը:



Եթէ այս դաշտամուկը ամէն օր մեկուկէս ստեպղին ունէ, քանի՞ օրէն ան բոլոր ստեպղինները պիտի ունէ:



Եթէ պզտիկ որդը նախ անցնի դէպի ձախ դարձող առաջին անցքէն, ապա՝ դէպի աջ դարձող երկրորդ անցքէն, յետոյ՝ դարձեալ դէպի աջ առաջին անցքէն, ապա՝ դէպի ձախ առաջին անցքէն եւ, վերջապէս, դէպի ձախ երկրորդ անցքէն, ո՞ր պիտի հասնի:



Կրնա՞ս 3 քառակուսիներ կազմել միայն երկու ձիւղերու տեղերը փոխելով:



Ո՞ր սունկին մէջ կ'ապրի իւրաքանչիւր թղուկ: Ա. թղուկը կ'ապրի ամէնէն քիչ պատուհան ունեցող սունկին մէջ, Բ. թղուկը կ'ապրի Գ. թղուկին տան մօտ, սակայն անոր սունկին տանիքը ամէնէն քիչ թիւով կետեր ունի: Գ. թղուկը կ'ապրի ամէնէն պզտիկ սունկին մէջ: Դ. թղուկին տանիքին վրայ կետեր չկան: Ե. թղուկը կ'ապրի ո՞չ ամէնէն մեծ, ո՞չ ալ ամէնէն պզտիկ սունկին մէջ:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ


## ԽՈՒՍՆՈՑ

### ՏՈՒՐՄՈՎ ԿԱԹ



Զմբան ցուրտ օդերուն տաքնալու համար պատրաստե այս տաքուկ խմիչքը:

Պեղք ունիս



100 կրամ կարկանդակի սեւ տուրմ, 2 գաւաթ կաթ, 3 ապուրի զգալ շաքար, 1 թէյի զգալ կասիա, 1 ապուրի զգալ հեղուկ եւ իւղը քիչ քրէմ ֆրէշ:

մէջ, վրան աւելցուր քիչ մը կաթ: Ձգէ, որ տուրմը մը հալի շատ մեղմ կրակի վրայ:

3) Երբ տուրմը հալի, աւելցուր կաթը, շաքարը, կասիան եւ քրէմ ֆրէշը:

4) Միջակ կրակի վրայ տաքցուր խմիչքը 15 վայրկեան՝ գայն փայտէ զգալով մը խառնելով: Խմէ տաք, սակայն առանց լեզուդ այրելու:

Պատրաստութիւն  
 1) Տուրմը կտրտէ  
 2) Տուրմի կտորները զիր պզտիկ կաթսայի մը

**bezdig\_mezdig@hotmail.com**

# ՈՒՊԻՆՆ, ԵՒ Ո՛Ձ...

Շարունակում՝ 5րդ էջէն

«Եթէ կ'ուզես...» (Հմմտ. Մտ 19-21):  
 Օրէնքի ուսուցիչներու եւ փարիսեցիներու իմաստութիւնը ձողկուեցաւ Յիսուսի կողմէ, որովհետեւ Աստուած իսկական ճշմարտութիւնը անոնցմէ ծածկեց ու պարզ եւ համեստ մարդոց յայտնեց (Հմմտ. Ղկ 10-21): Հիմա, որ պարտուած են անոնք, գիրն ու տա՛ր պիտի ստանան անոնց բռնատիրական դերակատարութիւնը: Առաքեալն այ կ'ըսէ, որ Օրէնքը կը սպաննէ մինչ Հոգին կեանք կու տայ (Հմմտ. Բ. Օր 3-7):

Քրիստոնէական բարոյականին կանոնները սուրբ են եւ անբռնաբարելի, որոնք ամփոփուած կան Աստուածաշունչ մատանին մէջ: Անոնց ուսուցումն ու գործարարութիւնը եւս անժխտելիորէն անհրաժեշտ են այս կեանքը սատուածահանոյ դարձնելու համար: Սակայն Աստուածաշունչի պատուիրաններուն տառացիորէն հետեւելու փորձութիւնը, փարիսեցիներու նոր վոհմակի մը կազմակերպական աշխատանքը պիտի դառնայ, անուղղակի պայքար բանալով Յիսուսի դէմ: Մոռցա՞ր, որ Տէրը ինչքա՛ն պայքարեցաւ անոնց դէմ, մինչեւ իսկ անոնց թիթիմորէն գզուչացնելով իր հետեւորդները (Հմմտ Ղկ 12.1):

Աստուածաշունչը մեր քրիստոնէական Օրէնքի Սրբազան կանոնադրքն է, սակայն Օրէնսդիրը, որ միաժամանակ արդար Դատաւորն է, անոր ոգին գործքով արտայայտել կը թելադրէ, եւ ո՛չ թէ զայն տառացիորէն գործադրել:

## ՀՈՒՊԵՆՆԱՆԳԻՍ

ԼՈՒՒԶԱ ՊԵՔԵՐԵՃԵԱՆԻ (ՕՃԵԱ՛յ՝ ՄԱԳՈՒՏԵԱՆ) մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2003, Աճթիլիսահ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՇԵԼԷՆ ՊԱՍՏՐՄԱՃԻԻ (ՕՃԵԱ՛յ՝ ԶԵՇԻՇԵԱՆ) մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2003, Հայ Կաթողիկէ Ս.Եղիա Եկեղեցւոյ մէջ, Տրպպաս հրապարակ կէտօրուան ժամը 12:00ից:

ՆԵՐՍԷՆ ՊԵՐՂՈՒԹԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2003, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ ՋԱՐՄԱՆՈՒՆԻ ԼՈՒՐՁԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2003, Այճնարի Ս. Պօղոս Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

## ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 5347 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՒՆՈՒՄԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՑ
1. Նայիրի Զարեանի երկերէն - Տառի մը անունը:	1. Սերա - Մեղուախումբ:
2. Կապոց - Մարտակերտի գիւղերէն:	2. 1885ին հիմնուած հայկական կուսակցութիւն:
3. Էական բայ - Կտակ - Գաղթող թռչուն:	3. Դրկից տառեր - Անթուրիանի ռեժիսոր փիլ - Ո՛ւր:
4. Աստուած - Նախընթաց:	4. Յանձնել - Գարշելի:
5. Ուրիշին անկարօտ - Երկիրը:	5. Ջինջ, վճիտ - Ձայնանիշ:
6. Խաղողի եփած բաղցու - Ձիւթ - Գեղեցիկ արքայ:	6. Կտակ ճերմկեցող - Օձի գալար:
7. Մրրկող - Վախճան:	7. Ժխտական պատասխան - Դասակարգ - Ստացական ածական:
8. Ապարանք - Հեղ (Հակ.):	8. Ռափայէլ Պատկանեանի երկերէն - Ջոկ:
9. Անձնական դերանուն - Շերամի թիւ:	9. Որովայն - Սաղմնատուն:
10. Պանդուր:	10. Պաճուճանք:
11. Յած, խոնարհ - Ոչխար:	11. Ուտի - Աշուղ Արմենակ Մարկոսեան:

**ԹԻՒ 5346**

**ԽԱՉԲԱՆԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Հ	Ա	Ճ	Ա	Ք	Ա	Ք	Ա	Ք	Ա
2	Ո	Ի	Ք	Ե	Ք	Ք	Ե	Ք	Ե	Ք
3	Մ	Ր	Ա	Կ	Ս	Ե	Ռ	Ա	Ք	Ե
4	Ա	Ք	Գ	Ի	Լ	Կ	Ա	Մ	Ք	Ե
5	Ն	Պ	Ա	Ս	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ա
6	Ք	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ա	Ա
7	Տ	Ո	Լ	Ի	Ն	Ի	Ռ	Ք	Ք	Ք
8	Հ	Ա	Յ	Ա	Ա	Կ	Ա	Ն	Ք	Ք
9	Ա	Ն	Յ	Ա	Ն	Ո	Ր	Յ	Ո	Ք
10	Յ	Ո	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
11	Ո	Պ	Ա	Գ	Պ	Ս	Ա	Կ	Ք	Ք

- Կարգա՛ Աստուածաշունչը ամէ՛ն օր,  
 - Սորվի՛ր ամէն ինչ որ կայ այնտեղ,  
 - Գործադրէ՛ ինչքա՛ն որ կարողութիւնդ կը ներէ,  
 որպէսզի Յիսուսի պատուէրին համաձայն՝ ոգիին կառչիս, տառին կաշէլու փոխարէն:

Աստուածաշունչի ոգիին կառչիլը ամուր պիտի պահէ թեզ բարոյական պատուանդանիդ վրայ, մինչդեռ թեզ տառին կապնող ձգախէժը սաստիկ տաքութեան կամ այլ վիճակի բերուածով կրնայ բաժնուիլ՝ ի վնաս թեզի: Մի՛ մոռնար, որ սաստիկ տաքութեան՝ նեղութեան պահէր չեն պակսիր մեր կեանքին մէջ, որոնք մեզ զօրացնելու ուժին չափ ունին նաեւ մեզ տկարացնելու կարողութիւն:

«Ականջ ունեցողը թող լսէ» (Ղկ 8-8):

ՍԱԿԱՐԱՆ	
Պէրլուտի սակարանին մէջ օտար դրամանշններու փակման սակագիները հետեւեալներն էին երկ.	
Սուրիական թղթուկի	32,10 - 32,20 լ.ն.
Իրաքեան տինար	4870,00 - 4880,00 լ.ն.
Քուէթեան տինար	4995,00 - 5020,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2105,00 - 2115,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3960,00 - 3985,00 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,00 - 410,00 լ.ն.
Քարաքեան ռիալ	411,00 - 413,00 լ.ն.
Սէուտական ռիալ	399,30 - 401,30 լ.ն.
Օմանեան ռիալ	3870,00 - 3895,00 լ.ն.
Եգիպտական ռիալ	290,00 - 300,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2420,00 - 2430,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1092,00 - 1097,00 լ.ն.
Թրքական լիրա	90,50 - 91,00 լ.ն.
Կիպրական փաուստ	2775,00 - 2800,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,65 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2,65 - 2,70 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	975,00 - 980,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	882,00 - 887,00 լ.ն.
Եւրօ	1595,00 - 1605,00 լ.ն.
● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	135,000 - 140,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	126,000 - 131,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	113,000 - 118,000 լ.ն.
Մէքսիքական փէտսու	645,000 - 665,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,100,000 - 17,300,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	357,00 - 357,50 \$
Մէկ օնս արծաթ	4,80 - 4,82 \$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրօ	1.0650 - 1.0655
Քանադական տոլար	1.5319 - 1.5329
Չուիցերիական ֆրանք	1.3690 - 1.3700
Ճափոնական եէն	117.71 - 117.00
Մէկ սթերլին	1.6162 - 1.6172
Մէկ տոլար	585 գրամ
● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	
Գիւնի Ա. ճշդում	Գիւնի Բ. ճշդում
Ա. կարգ	4 7/8 5
Բ. կարգ	4 7/8 5 2/8
ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852	

## ☆ Ի՛նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ՅՈՒՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)  
 Ոչինչ բան մը կը բաւէ որ ձեր լաւ տրամադրութիւնը փոխուի տրամաբան: Ձեր ետեղը պահպանելու համար փոքր երկ մը ըրէք: Ժպտե՛ք որ կեանքը ժպտի թեզի:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)  
 Եթէ շարքավերջին պտոյտի դուրս պիտի ելլէք, ստուգեցէք ձեր ինքնաշարժին վիճակը, որպէսզի բարդութիւն մը չստեղծուի: Որպէսզի նամբու կիսուն չի մնաք, մեքենական ստուգումները անհրաժեշտ են:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)  
 Ձեր տնտեսական հարցին կապուած ոչ մէկ համաձայնագիր ստորագրեցէք: Եթէ նոյնիսկ ձեզ ստիպեն անպարել եւ արագացնել վճարումները, դուք ճիշդ պայմանագրով մը ուզեցէք մասնավարները երկարած գելու:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)  
 Ձեր հրապոյրը կամ քառօրյա կանոնադրուած տկար պիտի ըլլայ այսօր: Հարկ է որ փոքր երկ մը կատարէք բարեացակամ կամ ծառայատէր ըլլալու, որպէսզի յարգուիք:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)  
 Տրամադրութիւն չունիք այսօր տունէն դուրս ելլելու, մինչեւ իսկ պիտի ջնջեք նախօրոք որոշուած ժամադրութիւնները: Բայց փստս, որովհետեւ աղուոր առիթ մը պիտի կորսնցնէք:

☆ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)  
 Եղէք անկեղծ եւ սրտեղբ, ընկերային թէ առեւտրական մարզերու մէջ, եթէ չէք ուզեր բան մը կորսնցնել: Անուշ լեզու ո՞՞ր ծակէ կը հանէ կ'ըսեն:

☆ **ԿԻՌԻՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)  
 Մի տխրիք, եթէ ձեր բեկանձը չի յաջողի ընտրութեան մը կամ որոշ գործի մը առաջարկի պարագային: Բայտը շուտով պիտի ժպտի ձեզի:

☆ **ԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)  
 Եթէ որոշ հետաւորութեան մը պիտի կապ մը ունիք, այսօր հարցերը այնքան ալ հեշտ պիտի չըլլան: Վստահութեան պակաս ունիք, ու ասիկա հասանաբար երկու կողմնորոշում մըն է:

☆ **ԱՆԵՂՆԱՌՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)  
 Ծառ պարգամիտ պիտի ըլլաք այսօր, ու ձեզի հանդիպող առաջին անձն իսկ պիտի կարենայ խաբել ձեզ: Ուշադիր եղէք մասնաւորապէս առեւտուրի պահուն:

☆ **ՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)  
 Եթէ կ'ուզէք որ ձեր գործընկերը կամ ձեր ամուսինը վէճի դուռ չբացայ, եղէք հանդուրժող եւ համակերպող անոր որոշումներուն: Այսուհանդերձ ետք չզոյզար:

☆ **ՈՎԱՆՈՅՑ** (21 Յունուարէն 19 Փետրուար)  
 Այսօր թիչ մը անհանգիստ ըլլալով անկողինի մէջ պիտի անցնէք օրը: Ձեր շուրջը գտնուողները պիտի գուրգուրան ձեր վրայ որ հանգիստ ընէք:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)  
 Այսօր պիտի ըլլաք վնասակար, եւ պիտի ըսէք ձեր վերջին խօսքը ձեր անհնազանդ կամ կամակոր գաւակներուն, նոյնիսկ ձեր ամուսնուն: Անոնց պիտի հասկցնէք թէ չափը անուցած են եւ դուք ձանձրացած իրենց բնայնէ:

# ՕՐԱՏԵՐ

ՓՈՒՍՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ԽՐԱԽՆԱՆՔ

## ՉԱՀԼԵԻ ՄԵՉ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ»

Շարունակելով պանատան հովանաւորութիւնը: Երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ պանդոկին ճաշարահին մէջ տեղի ունենայիք «Հայկական երեկոյ» ունի ճոխ յայտագիր: Պիտի ներկայացուին Հայաստանի պատմութեան եւս ամուսնութիւններուն մասին տեղեկութիւններ, ինչպէս նաեւ՝ հայկական գեղարուեստապետ յայտագիր: Ճաշարահովորդ պիտի ընդգրկուին ընթացքին ելոյթ պիտի ունենայ Համալսարանի «Քնար» պարախումբը, իսկ հայկական երաժշտական խումբ մը խանդավառ պահեր պիտի ստեղծէ մինչեւ ուշ գիշեր:

«Արմինիոն Երբ»՝ Ջանիէի «Կրանտ օրէի Քառի» մէջ, ժամը 21:00էն սկսեալ:  
 - Մուսաֆա Փարոքի նուիրուած ցուցահանգէս, Սրբոյր Քանգարահին մէջ, ժամը 10:00էն 13:00, երեկոյեան ժամը 16:00էն 19:00, մինչեւ 8 Մարտ:  
 - Պարային ներկայացում, Քարաքալայի «Տէօ միլ է իւն նուր», ժամը 20:00ից, «ՊԻԷԼ»ի մէջ: Ելոյթները կը շարունակուին մինչեւ 31 Յունուար:



## ՀԵՌԱՏԵՍԻԼ

09:00.- Սապահո	12:00.- Շիֆր էլէթր	12:30.- Երգերու յայտագիր	13:00.- Մաքուլ հանա	14:00.- Ետրոնիւլ	14:30.- Լուրեր	15:00.- Մըշուար	17:30.- Պէսք սելըր	18:30.- Ապու Մըլիէմ	19:30.- Լուրեր	20:00.- Ամերիկեան յայտագիր	21:00.- Լայալի Պէյրուր	00:00.- Պէսք Սելըր
22:00.- Գեղարուեստական երեկոյ	ԷՆ. ՊԻ. ԷՆ. 15:00.- Լուրեր	16:00.- Թախտիաք ալդատ	18:00.- Նօ քունք	18:15.- Քաղաքական յայտագիր	18:30.- Սինէմա / 35mm	19:00.- Լուրեր	20:30.- «Սելէպրիթի»	21:30.- Սիէսիալ	22:00.- Այ մասաիյա	23:30.- Թաքիքալ էաոււմ	00:00.- Լուրեր	ՆԵՌՈՒ ԹԻ. ՎԻ. 7:30.- Լուրեր
15:00.- Հայրուր	15:20.- Մուլտֆիլմ «Դէ, սպաիր»	15:45.- Պրօ TV	16:10.- Բարի ախորժակ	16:30.- Երեկոյեան Երեւան	16:40.- Խորան լուսոյ	16:50.- Հեռուստատեսային գրատուն (առաջին մաս)	17:20.- «Շէկ ինքնաթիռ»	18:35.- Տուն-տունիկ	19:00.- Հայրուր	19:50.- Ջինուս	20:25.- Երկրի ուղը	20:45.- Երաժշտական փոստարկղ
22:00.- Հայրուր	22:20.- Երեկոյեան Երեւան	22:30.- Խորան Լուսոյ	22:40.- Հեռուստատեսային գրատուն (առաջին մաս)	23:40.- Հեռուստատեսային գրատուն	Գէորգ Գէորգեան «Դաշտադէմ»	00:15.- Կանանց հեռուստատեսային	01:45.- Տօ, ո՞՞, մի	03:00.- Հայրուր	03:45.- Դանի՛, մի պատմութիւն պատմիր	04:00.- Անցեալը ներկան է	04:45.- Երեկոյեան Երեւան	04:25.- Հայերը
04:55.- Հեռուստատեսային	Գէորգ Գէորգեան «Դաշտադէմ»	06:00.- Միժաղի տուն	(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակայ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:									

## ՄՈՒՍԹԱՔՊԱԼ

7:00.- Լուրեր	9:00.- Այլաւ Այ Սապահ	11:00.- Խոհանոց	12:00.- Լուրեր	12:05.- Եգիպտական ֆիլմաշար	13:00.- Ամերիկեան ժպտալիս «Սթիլ նաթ քուայթ հիւմըն»	14:30.- Օրոնոպիլ	15:00.- Լուրեր	15:30.- Ամերիկեան ֆիլմաշար	19:00.- Այլալի	20:00.- Արաբերէն լուրեր	20:30.- Բըսա քրպիրէ
7:00.- Լուրեր	7:00.- Հայրուր	7:20.- Կարճամետրաժ ֆիլմ «Չախորդ Փանուր»	7:50.- Միժաղի տուն	9:00.- «Միլոյ կախարհանք»	9:45.- Փառասոս «Մուտք 21րդ դար»	10:10.- Կարօտ</					

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՏՈՍՍ

### ԴԵՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ

Այսօր, կեսօրից ետք ժամը 14:15ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. կը հիւրընկալէ ֆուտբոլի Բ. դասակարգի Կորաուրագոյն կազմերէն՝ Թրիփոլիի Ռիատա Ուայ Ատապը: Ինչպէս միշտ, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները այսօր եւս վստահաբար պիտի գրաւեն դաշտին թրիպիւնները:

Պէյրուսի մեր փողերահումքի տղոց այսօր կ'ընկերակցին նաեւ Այնճարի փողերահումքի տղաքը, 30 հոգիով, ինչ որ կը նշանակէ, թէ այսօրուան տօնախմբուները պիտի ըլլայ միւսներէն բոլորովին տարբեր: Կը մնայ, որ մեր տղաքը կոլէրու փառաստօնով մը հանդէս գան դաշտին վրայ, մոռցնեն անցեալ շաբթուան անսպասելի հաւասարութեան անախորժ «ցաւը» եւ վերստին վերադարձնեն մեր աննման համակիրները իրենց անխառն ուրախութեան, որպէսզի դարձեալ երգենք մեր խրոխտ քայլերգը, խրոխտ կշռոյթով ու վեհօրէն:

Յատա՛ջ անասան, դէպի յաղթանակ:

ՀԱՄԱԿԻՐ

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԱԶՄԻՆ ՀԱՐԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Լիբանանի պասքեթբոլի աղջկանց Բ. դասակարգին ախոյեանութեան դարձի 2րդ հանգրուանի մրցումներուն, այսօր Շաբաթ, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուս կը ճակատի Ֆիտաա Սայտայի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 20:00ին, Քֆարիպպայի դաշտին վրայ:

Երթին իր արձանագրած յաղթանակին նման (55-40), Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկներէն կը սպասուի կրկնէլ իրենց երկրորդ յաղթանակը, աւելի եւս ամրապնդելու համար պարագլուխի իրենց դիրքը:

● ՏՂՈՅ Բ. դասակարգի ախոյեանութեան դարձի 2րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ կիրակի, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը Շանվիլի նորակառոյց դաշտին վրայ կը մրցի Նաժմար Ռիատի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 21:00ին:

● ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ նահանգէն ներս տեղի ունեցող Դ. դասակարգի մրցումներուն, վաղը՝ կիրակի, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս Սաժէս Ժոնտէի դաշտին վրայ կը մրցի Ամալ Պիքֆայի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 3:00ին:

● Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի երեք մրցումներուն ալ ներկայ գտնուիլ, մասնաւոր, որ դաշտերուն մուտքը ձրի է:

● ՇԱԲԱԹՎԵՐՁԻՆ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս Ա. դասակարգի ախոյեանութեան գծով մրցում չունի կատարելիք:

Նշենք, թէ դասաւորումը այժմ կը ներկայացընէ հետեւեալ պատկերը.

ՄՐՑ. ՅԱՂԹ. ՊԱՐՏ. ԿԵՏ	1.	2.	3.	4.	5.	6.
Ա. Ազրբայճան	5	5	0	15		
Սաժէս	5	3	2	11		
Հ.Մ.Ը.Մ.	5	3	2	11		
Է. Է. Է. ԳԵ.	5	2	3	9		
Ռիատի	5	1	4	7		
Սատարա	5	1	4	7		

## Հ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՄ

### ԱՅՍՕՐ՝ ԶԵՄԱՐԱՆ - ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱԻԱՐՏԱԿԱՆ

Հ. Մ. Ը. Մ.ի ԼԵՎԱՄի յանձնախումբին կողմէ կազմակերպուած ֆուտբոլի մրցաշարքը կ'աւարտի այսօր, երբ տեղի կ'ունենայ աւարտական մրցումը՝ ձեւարանի եւ Մեսրոպեանի միջեւ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 3:30ին: Նախքան այս մրցումը տեղի պիտի ունենայ 3րդ դիրքի ճակատումը՝ Եղիշէ Մանուկեանի եւ Դպրեվանքի միջեւ ժամը 2:30ին:

Աւարտականի այս մրցումին, յաւելեալ կարելորութիւն ընծայելու երկու վարժարաններուն աշակերտներէն եւ անոնց ծնողներէն կը սպասուի ներկայ ըլլալ այս աւարտական մրցումին, քաջալերելու համար իրենց կազմը:

ԼԵՎԱՄի յաջորդ մրցումները պիտի ըլլան փինկ փոնկի խաղերը, որոնք տեղի պիտի ունենան «Sevoh and Joe» շէքսը (Չալքա), Ա. յարկ: Շաբաթ, 25 Յունուարին՝ տեղի պիտի ունենան տղոց մրցումները, իսկ կիրակի, 26 Յունուարին՝ աղջրկանց մրցումները:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՏՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. - ՌԻԱՏԱ ՌԻԱԼ ԱՏԱՊ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան Բ. դասակարգի ախոյեանութեան 12րդ հանգրուանի բացման մրցումին, երէկ Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Իժթիմահի - Իսլահ Պըրժ Շիմալի մրցումը, որ վերջ գտաւ 0-0 արդիւնքով: Հիւսիսի կազմը յաջորդաբար երկրորդ մրցումը ըլլալով 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը կ'արձանագրէ:

Իր արձանագրած այս հաւասարութենէն ետք 3րդ դիրքը գրաւող Իսլահ ունեցաւ 16 կետ: Անիկա այժմ երեք կետով ետ է 2րդ դիրքը գրաւող Հ. Մ. Մ.էն, որ այս շաբթուական մրցումներէն նման յաղթանակ արձանագրելու վճռականութեամբ դաշտ պիտի ներկայանայ:

մը պիտի կատարէ յառաջիկայ Երեքշաբթի օր, նոյնիսքն՝ Իսլահի դէմ:

Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը պիտի հիւրընկալէ հիւսիսի կազմերէն՝ Ռիատա Ուայ Ատապը: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 2:15ին:

Յարդ անպարտելի միակ խումբը՝ Հ. Մ. Ը. Մ., որ անցեալ Շաբաթ օր Աիլի Սայտայի դէմ տեղի ունեցած մրցումին (1-1) կորսնցուցող նախկին իր առաջին երկու կետերը, իր կատարած նախորդ ութ մրցումներուն նման յաղթանակ արձանագրելու վճռականութեամբ դաշտ պիտի ներկայանայ:

Լաւագոյն յարձակողական ունեցող (28 կոլ) եւ Շապապ Թրիփոլիի նման յաւագոյն պաշտպանողական գիծը ունեցող (6 կոլ) Հ. Մ. Ը. Մ.ի համակիրները իրենց խումբէն յաղթանակէ բացի ուրիշ ոչինչ ունին ակընկալելիք:

Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկներէն կը սպասուի այսօր կոլերու փառաստօնով մը աւարտել Ռիատա Ուայ Ատապի դէմ այս ճակատումը եւ այս եղանակին առաջին անգամ ըլլալով հինգէ աւելի կոլեր նշանակել մրցակից կազմին բերդէն ներս:

Նախապէս երկու անգամ Հ. Մ. Ը. Մ. 5ակն կոլ նշանակած է Մահապպա Թրիփոլիի (5-2) եւ Իժթիմահիի (5-1) բերդէն ներս:

Ստորեւ՝ շաբթուական տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը.

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ (12ՐԳ ՀԱՆԳՐՈՒՄԵՆ) Բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին

● ՇԱՐԹ, 18 ՅՈՒՆԻՍԻՐ ԴԱՇՏ Ահիլ Սայտա - Մաժտալ Այնճար Սուր Հ. Մ. Ը. Մ. - Ռիատա Ուայ Ատապ Պ. Համուտ

● ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՍԻՐ Ռասիճկ - Շապապ Թրիփոլի Ժոնտէ Նապաթիէ - Մահապպա Ժոնտէ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ (10ՐԳ ՀԱՆԳՐՈՒՄԵՆ) ● ՇԱՐԹ, 18 ՅՈՒՆԻՍԻՐ

ԺԱՄ	ԴԱՇՏ
Ախա Ալէյ - Մապարրա	2:15ից
Պըրժ - Անսար	4:45ից

● ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՍԻՐ Սաժէս - Սալամ 2:15ից Պ. Համուտ Սաֆա - Շ. Սահէլ 2:15ից Սաֆա Անտ - Օլիմպիկ 2:15ից Պէյրուս Մ. Աւան 4:45ից

## ԱՒՏԱՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱԾԱՐՔ


### ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՆՅԱԻ Դ. ՀԱՆԳՐՈՒՄԵՆ

Աւստրալիոյ մէջ տեղի ունեցող թենիսի կրան շլէմի բաց մրցաշարքին 9. հանգրուանի երէկուան մրցումներուն, Հայաստանէն Սարգիս Սարգսեան շարունակեց իր յաղթանակները եւ ապահովեց Դ. հանգրուանին իր տոմար, այս անգամ իր «պոլը» դարձնելով աւստրալիացի Մարք Ֆիլիփոսիսը՝ 5-7, 7-5, 6-0 եւ 6-4 արդիւնքով:

Հակառակ անոր որ առաջին սեթին հայրենի մարզիկը պարտուեցաւ, սակայն մնացեալ երեքին յաջողեցաւ ապահովել իր տոմար, այսպիսով տարի մը եւս սպասել տայով աւստրալիացին, որ կ'երպար իր երկրին մէջ տեղի ունեցող կրան շլէմի տիրոջն իրանայ: Նշենք, թէ Սարգսեան - Ֆիլիփոսիս մրցումը տեւեց 3 ժամ եւ 16 վայրկեան:

Դ. հանգրուանի մրցումներուն, Սարգիս Սարգսեանի մրցակիցը պիտի ըլլայ հարաւային ափրիկեցի Ուէյն Ֆերէյրա, որ երէկ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, հակառակ որ առաջին երկու սեթերը պարտուած էր ամերիկացի Մարտի Ֆիշին: Մրցումը վերջ գտաւ Ֆերէյրայի յաղթանակով՝ 2-6, 3-6, 6-1, 6-4 եւ 6-0:

Երէկուան մրցումներուն սպանացի Ֆելիքս Մանթելա մեծ անակնկալ մը ստեղծեց, երբ մրցաշարքին դուրս ձգեց իր սպգակիցը՝ Ալպեր Քոսթան (դասուած՝ 8րդ), արձանագրելով 3-6, 6-3,




Սարգիս Սարգսեան

4-6, 6-1 եւ 6-3 արդիւնքով:

2րդ դասուած ամերիկացի Անտոնի Սուարէսի կրած պարտութենէն, որ չկրցաւ անցնիլ Դ. հանգրուան, 7-5 եւ 6-4 արդիւնքով պարտուելէ ետք աւստրիացի Նիքոլ Փրաթէն:

Դ. հանգրուանի տղոց մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ կարեւոր մրցում մը՝ 10րդ դասուած արժաթինահայ Դաւիթ Նալպանտեանի եւ 20րդ դասուած պելճիքացի Չաւիէ Մալիսիի միջեւ:



Դ. հանգրուանի Սարգսեանի մրցակիցը՝ Ուէյն Ֆերէյրա

Ստորեւ՝ 9. հանգրուանի երէկուան մրցումներուն արդիւնքները.

ՏՂԱԿ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) - Մարք Ֆիլիփոսիս (Աւստրալիա) 5-7, 7-5, 6-0 եւ 6-4  
12.- Սեպասթիան Կրոժան (Ֆրանսա) - 24.- Նիքոլա Լաֆեթթի (Եթովպիա) 6-1, 6-3 եւ 6-3  
Մարտի Անտի (Թրուաթիա) - Փիքըր Լուքաթ (Աւստրիա) 2-6, 7-6, 6-4 եւ 6-2  
Կուրիեմօ Քորիա (Արժանթին) - Եարթո Նալմիկըն (Ֆիլիպին) 7-5, 6-2 եւ 6-2  
Ֆելիքս Մանթելա (Սպանիա) - 8.- Ալպեր Քոսթա (Սպանիա) 3-6, 6-3, 4-6, 6-1 եւ 6-3  
2.- Անտոն Ակասի (Մ. Ն.) - 29.- Նիքոլա Էսթիւտը (Ֆրանսա) 6-2, 3-6, 6-3, եւ 6-4  
Ուէյն Ֆերէյրա (Հարաւային Ափրիկէ) - Մարտի Ֆիշ (Մ. Ն.) 2-6, 3-6, 6-1, 6-4 եւ 6-0  
4.- Խուան Քարլոս Ֆերթո (Սպանիա) - Ֆապրիս Սանթրո (Ֆրանսա) 4-6, 6-3, 4-6, 6-2 եւ 7-5

ԱՂՋԻԿՆԵՐ 9.- Լիմսուէյ Տեվընփորթ (Մ. Ն.) - 24.- Թաթիանա Փանովա (Ռուսիա) 6-2 եւ 6-1  
Նիքոլ Փրաթ (Աւստրիա) - 23.- Փաուլա Սուարես (Արժանթին) 7-5 եւ 6-4  
Վիլիամս Թուանո Փասթալ (Սպանիա) - Մարլէն Ուէկկարըրը (Գերմանիա) 6-1, 4-6 եւ 6-4  
2.- Վիկտոր Ուիլիամս (Մ. Ն.) - Անքա Պառնա (Գերմանիա) 6-1 եւ 6-4  
5.- Յասթին Էնթին - Հարտէն (Պելճիքա) - 32.- Բարթիան Սրեպոբրնիք (Սլովենիա) 6-2 եւ 6-0  
12.- Փէթր Շնայտըր (Չեխիա) - Նատիա Փերովա (Ռուսիա) 6-2, 4-6 եւ 6-3  
8.- Տանիէա Հանրուշովա (Սլովակիա) - Սամանթա Սթոսիլը (Աւստրիա) 6-4 եւ 6-2  
Տենիս Շլապովա (Չեխիա) - Էվի Տոմիկիբովիչ (Աւստրիա) 6-3 եւ 6-2

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. - ՌԻԱՏԱ ՌԻԱԼ ԱՏԱՊ ՄՐՑՈՒՄԻՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ՝  
Հ. Մ. Ը. Մ. ԱՅՆՃԱՐԻ 30 ՀՈԳԻՆՈՅ ՓՈՂԵՐԱԽՈՒՄԲԸ

